

**ԷԶՄԻԱԾՆԻ ԵՎ ԱՇՏԱՐԱԿԻ  
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ**

**Գրի առավ ԱՍՏՂԻԿ ՆԱԶԱՐԵԱՆԸ**



## Խ Մ Բ Ա Գ Բ Ի Կ Ա Պ Ա Մ Ի Ց

**Բանահավաք Աստղիկ Նազարյանի Շեշոփածնի և Եղիածիածնի և Աշտարակի բանահյուսությունիցը ժողովածուն երկար տարիների բանահավաքալազական եռանդուն աշխատանքի արդյունք է:**

**Աստղիկ Լևոնի Նազարյանը ծնվել է 1907 թ. էջմիածնում: Հայրը՝ բնիկ էջմիածնեցի Լևոն Նազարյանը, աշտարակ է տեղի բանական գլուխը, մայրը՝ աշտարակցի Վարսենիկ Նազարյանը, նույնպես զրաքետ է եղել: Մինչև երիսաների շափառա զանալը Նազարյանների ընտանիքն ապրել է էջմիածնում, իսկ ամռան ու աշնան ամիսներին՝ Աշտարակում:**

**Ա. Նազարյանի մանկությունը հավասարապես անցել է և՛ էջմիածնում, և՛ Աշտարակում: Բնաշխարհի այս երկու վայրերում էլ մեծերից՝ պապից, տատից ու մյուս հարազատներից և հարեաններից ոչշիմ ու տպավորվող աղջնակն ունկողը է տեղի և աղջապահական ալլ շրջանների բանահյուսության հարուստ բազմազան նույներ (հներիաթ, առած-ասացվածք, առակ, ավանդություն, հանկուկ, շուտասելուկ և այլն), անշիր արել ու մտապահել տեսական ժամանակի:**

**Ավարտելով էջմիածնի մանկավարժական ուսումնարանը, Ա. Նազարյանը սովորել է Երևանի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի ինվագինական ֆակուլտետում: Բարձրագույն կրթություն ստանալով, նա երկար ժամանակ աշխատել է էջմիածնի շրջանի Ալեքշատ գյուղի գլուխություն որպես հայոց լեզվի և զրականության դաստու:**

**Ա. Նազարյանը, ապրելով ու աշխատելով գյուղական միջավայրում, մոտիկից ծանոթանալով գյուղի նիստուկացին, սիրել է հայ ժողովրդական բառն ու բանը և մեծ շանասիրությամբ ձեռնամուխ եղել բանահավաքական աշխատանքին: Ունենալով արտակարգ հիշողություն, նա կարողացել է վերականգնել գեռևս մանկության տարիներին ունկնդրած նյութերը: Միաժամանակ, շըր-**

**չագայել է գյուղերը, գրի առել նոր նյութեր և համարել իր հավաքածուն: Ա. Նազարյանի՝ հիշողությամբ բերված շատ նյութերում ասացողները շնորհած էլեկտրական արդյունաբերություն առաջին աշխատանքների սաների խմբական երգերը, հիշալ շրջանների ու կամաց աշխատանքներում առաջին աշխատանքների ու կամաց աշխատանքներում լսած երգերը, բամբակի զաշտերում և խաղողի այգիներում աշխատանքների ժամանակ կատարված երգերը և խաղիկները, ինչպես նաև զանազան առիթներով ասված առած-ասացվածքները, հանելուկները ու զուտասելուկները:**

**Ժողովածուն գրակշռող մասը կազմում են երգերն ու խաղիկները՝ թվով 308 հատ: Երգերն իրենց բովանդակությամբ ու մնությունը խիստ բազմազան են: Մեծ թիվ են կազմում սիրո երգերը, կամ նաև զինվորի, կննցաղային-երգիծական, պանդսության, ինչպես նաև նոր շրջանի երգեր:**

**Թեև երգերի գրառման վայրերը վարչա-տարածքային տեսակետից էջմիածնի-Աշտարակի շրջաններն են, բայց ընդգրկում են նաև 1914—1915 թթ. համաշխարհային առաջին պատերազմի և Մեծ Եղեռնի հետևանքով այստեղ տեղափոխված պատմական Հայաստանի աղջապահական մի շարք շրջանների (Ալաշկերտ, Մուշ, Վան, Պարսկահայք և այլն) երգերը:**

**Ժողովածուն նյութերի գրառման ժամանակն ընդգրկում է 1920-ական թվականներից մինչև 1950—60-ական թվականները: Բուն ժողովածուն-գեղջական երգերի կողքին տեղ են գտել նաև ժամանակին տարածում գտած քաղաքային երգերը:**

**Թե՛ տեղական և թե՛ Արևմտյան Հայաստանից բերված երգերն ընդհանուր գծեր ունեն հայ բանահյուսության ավանդական երգերի հետ, կամ բազմաթիվ տարբերակներ ու նմանակներ: Նույնը**

վերաբերում է նաև առած-ասացվածքներին ու  
հանելովկներին, ժողովածովի նյութերի բանահյու-  
սական արժեքը պետք է տեսնել պատմական այդ  
ժամանակահատվածում տարբեր ազգագրական  
շրջանների նյութերի համատեղ կենցաղավարման,  
փոխադարձ ներթափանցումների, ընդհանրու-  
թյունների ու տարբերությունների մեջ:

Երգերի ժողովածովի մեջ ներկայացված են՝  
ավանդական, ապա նոր շրջանի նյութերը: Ներքին  
խմբավորում և ենթաբաժիններ չեն ստեղծված,  
հաշվի առնելով, որ գերակշռող մասը սիրո երգեր  
են և որոշ իմաստով էլ այդ ստորաբաժանումնե-  
րը պայմանական են:

Խաղիկները դասակարգված են ըստ Մ. Աբեղ-  
յանի «Ժողովրդական խաղիկներ» ժողովածու-  
ում ընդունված կարգի՝ քառատողի վերջին բառի  
վերջին տառի այրբենական հերթականությամբ:

Առած-ասացվածքները դասակարգված են ըս-  
կրզմատառի այրբենական համակարգով:

Ժողովածուի նյութերի բարբառային-հնյու-  
նաբանական-քերականական առանձնահատկու-  
թյունները պահպանված են այնպես, ինչպես բա-  
նահավաքը պահպանել է իր գրառումներում:

Ժողովածուի վերջում տրված են բարբառային  
և օտար բառերի բառարան ու երգերի նոտագրված  
մի քանի նմուշներ:

Ա. ՆԱԶԻՆՑԱՆ

## Ե Բ Գ Ե Բ

### 1. ՀՈՒԴՈՒ ՑԱՐ ՎԵԼԱՐ

Հու դու յար չէլար,  
Զանիս դարդ էլար:  
Կանշում եմ, արի'.  
Հու դու յար չէլար,  
Մոտս ման արի,  
Զանիս դարդ էլար:  
Կանշում եմ, արի.  
Հու դու յար չէլար,  
Օրն էլավ տարի,  
Զանիս դարդ էլար:

### 2. ԼՈՒՍՆՅԱԿԻ

Լուսնակը կեռ ու կամար,  
Ամա՞ն, Մարտ չան,  
Ես մեռնում եմ քեզ համար,  
Այ՝ աման, անուշ յարո չան,  
Լուսնակի լուսը ես եմ,  
Ամա՞ն, Մարտ չան,  
Եմ յարի հույսը ես եմ,  
Այ՝ աման, անուշ յարո չան:  
Զեռներդ ծափ ես տալիս,  
Աման, Մարտ չան,  
Շորերդ թափ ես տալիս,  
Այ՝ աման, անուշ յարո չան:  
Եմ մեջինը քամար ա,  
Ամա՞ն, Մարտ չան,  
Քո ոնեքերը կամար ա,  
Այ՝ աման, անուշ յարո չան:

### 3. ՑԱՐ, ՑԱՐ

Կանշում եմ, արի', արի',  
Յա՞ր, յա՞ր, յարո չան,  
Մոտս ման արի,  
Լոթի Մարտ չան:  
Կայնի, գալում եմ,  
Յա՞ր, յա՞ր, յարո չան

Խնձոր թալում եմ,  
Լոթի յարո չան:  
Կայնել եմ քարին,  
Յա՞ր, յա՞ր, յարո չան,  
Կանշում եմ յարին,  
Լոթի յարո չան:  
Կանալ սարին եմ,  
Յա՞ր, յա՞ր, յարո չան,  
Շեկիկ յարին եմ,  
Լոթի յարո չան:

### 4. ԶԻՆԵԼԱՐ

Զինելար, լինելար,  
Զինելարս յաման ա,  
Աղջի չան,  
Զանե չան,  
Իմ չան, քո չանին դուրբան ա:  
Ղարիբ եմ, թառան զուշ եմ,  
Զինելար, լինելար,  
Զինելարս թամամ ա,  
Քեզի համար անուշ եմ,  
Աղջի չան,  
Զանե չան,  
Իմ չան քո չանին դուրբան ա:  
Գնա արի, բարին տուր,  
Զինելար, լինելար,  
Զինելարս յաման ա,  
Նախշոն գուպա յարին տուր,  
Աղջի չան,  
Զանե չան,  
Իմ չան քո չանին դուրբան:

### 5. ՄԱՐՈ ԶԱՆ

Մանդո, մանդո ման արի,  
Մարո չան,  
Իրիկոնը տուն արի,  
Յարո չան:  
Կայնի քարին, ձեն տուր յարին,

Մարո չան,  
Նամակ գրեմ, տար տուր յարին,  
Ճարո չան:

#### 6. ԹԱԼԻ, ԹԱԼԻ....

Մուղնվա ջուրը սառն ա,  
թալի, թալի,  
Շատ մոտիկ ա,  
Ղարիբութունը դառն ա,  
Աղջի, ծամերդ գոտիկ ա:  
Սիրանի ծառը ծաղկել ա,  
թալի, թալի,  
Շատ մոտիկ ա,  
Ցարիս ծամերը թախկել ա,  
Աղջի ծամերդ գոտիկ ա:

#### 7. ՄԱՄԵՐՈՎԸ ՅԱՐՍ

Մամերով յարս,  
Մամերով յարս,  
Վառեց զիգարս,  
Մամերով յարս:  
Աղջի, քու քելքը,  
Մամերով յարս,  
Տարավ իմ խելքը,  
Վառեց զիգարս:  
Բուրի տարին,  
Մամերով յարս,  
Կսպասիմ յարին,  
Վառեց զիգարս:

#### 8. ՀԱՄԱՅԱԿ ԶԱՆ

Համայակը մեկ էր,  
Մազերը շեկ էր,  
Համայակ չան,  
Թուխս ու ճոտով  
Տասնը մեկ էր,  
Համայակ չան:  
Համայակ, իմ յար,  
Համայակ, քո յար.  
Համայակ չան:  
Վերին բազս ծախսմ,  
Համայակիս պահնմ,  
Համայակ չան:  
Կայնի ծաղիկ-սարին,  
Ուշք ու միտքդ յարին,  
Համայակ չան:  
Համայակ, իմ յար,  
Համայակ, քո յար,  
Համայակ չան:

#### 9. ՅԱՐ, ՅԱՆԱՐԱԿԱՆ ԵՄ

Յար, յանարական եմ,  
Մոսկով վաճառական եմ:  
Կանաչել են արտերս,  
Ցա՛ր, յանարական եմ,  
Իրար մի տա զարդերս,  
Մոսկով վաճառական եմ:  
Ցարիս յանարին մեռնեմ,  
Ցա՛ր, յանարական եմ,  
Մեջքի քամարին մեռնեմ,  
Մոսկով վաճառական եմ:  
Չաղիր եմ զարկել սարին,  
Ցա՛ր, յանարական եմ,  
Պայման եմ արել տարին,  
Մոսկով վաճառական եմ:  
Ինչ եմ անում հարուստ տուն,  
Ցա՛ր, յանարական եմ,  
Տղեն տես, աղջիկը տուր,  
Մոսկով վաճառական եմ:

#### 10. ԵՄ ԱՍԵՑԻ

Ես ասեցի՝ յարս էր գալիս  
Բարձր սարիցը  
Վարդ էր քաղում, փունչ էր կապում  
Վարդի թփիցը,  
Ասեցի՝ թող ևս էլ քաշեմ  
Էղ անուշ հոտիցը,  
Ասալ՝ գնա՛, դե՛, հեռացիր  
Դուն իմ մոտիցը:  
Հենց լսեցի էս խոսքերը  
Ցարիս բերնիցը,  
Էլ ոտներիս ուժ շմաց,  
Շարժվիմ իմ տեղիցը:  
Մտքում դրի՝ թողնեմ, կորշեմ  
Սրտիս խանդիցը,  
Որ պրծնեմ յարիս տված  
Կապուտ ցավիցը:

#### 11. ՆԱԳԱՆ ԶԱՆ

Վո՞ւ-վո՞ւ նագան չան,  
Ցոթ կրական չան,  
Իմ օգնական չան:  
Գնացի Ալստեն,  
Նագանիս բախտեն,  
—Վո՞ւ, վո՞ւ նագան չան,  
Իմ օգնական չան:  
Շաղով գնացի,  
Նագանս կորուցի,  
Վո՞ւ-վո՞ւ նագան չան,

Յոթ կրական շան,  
իմ օգնական շան:

## 12. ՄԱՔՐՈՒՀԻ

Մարավանն էկավ զնդողալին,  
Մաքրուհի շան, Մաքրուհի.  
Քարավանի մեջ  
Զորի մը կեր,  
Մաքրուհի շան, Մաքրուհի.  
Զորու վերն  
Մնդուկմ կեր,  
Մաքրուհի շան, Մաքրուհի.  
Մնդուկի մեջ  
Բողն մը կեր,  
Մաքրուհի շան, Մաքրուհի.  
Բողն մեջը  
Հայի մը կեր,  
Մաքրուհի շան, Մաքրուհի.

Հալլու մեջը

Աղջիկ մը կեր,  
Մաքրուհի շան, Մաքրուհի.  
—Աղջի, աղջի,  
Անդոնդ ի՞նչ ի,  
Մաքրուհի շան, Մաքրուհի,  
—Ա՛յ շան տղա,  
Դավիդի ի՞նչ ի,  
Մաքրուհի շան, Մաքրուհի.  
—Իմ խեր իմնա,  
Քե կսպանա,  
Մաքրուհի շան, Մաքրուհի:

## 13. ՓՇԱՏԻ ԾԱՌ

Սիրանի ևս, շլորի,  
Փշատի ծառ, ուռի  
Բար մի տա,  
Ճղեներդ մի ոլորի,  
Գշաղա արի  
Քո սիրածը տար:  
Նիրանի ևս թթենի,  
Փշատի ծառ, ուռի  
Բար մի տա,  
Տղա քո յարը գտի,  
Գյաղա արի  
Քո ուղածը տար:

## 14. ՅԱՐՆ ԱՆՌԻՇ

Կապուտ քուսակ հեծել եմ,  
Քեղի մեռնեմ,  
Արագին մոտեցել եմ,  
Յարն անուշ:

Յարն անուշ ա,  
Յարն անուշ,  
Քեղի մեռնեմ,  
Յար բերող  
Մերն անուշ,  
Յարն անուշ:  
Արագ, ընձի ճամփա տուր,  
Քեղի մեռնեմ,  
Շեկ յարին կարոտցել եմ,  
Յարն անուշ:  
Յարն անուշ,  
Յարն անուշ,  
Քեղի մեռնեմ,  
Յար բերող  
Մերն էր անուշ,  
Յարն անուշ:

## 15. ՎԱՇ, ՎԱՇ ԿՑՈՒԽԻ

Նստել ես ֆայտոնը,  
Լավ ա սազում, յաման,  
Քեզ մահուրի պալտոնը,  
Վա՛յ, վա՛յ զյուլի յարը:  
Ինչ եմ անում ոսկին,  
Թողնեմ ոսկին, յաման,  
Երթամ յարիս խոսքին,  
Վա՛յ, վա՛յ զյուլի յարը:  
Բխտերը պատի,  
Կանքետն ուտի յարս  
Թղթերը շպրտի  
Վա՛յ, վա՛յ զյուլի յարս:

## 16. ԷՐԵՎԱՆ ԷԼԼՈՒ ՅԱՐ

Էրեվան բաղ եմ արել,  
Էրեվան, էլլու յար,  
Ջիգյարս զաղ եմ արել,  
Ե՞րբ կգաս, թելլու յար:  
Էրեվան զար ու փոս ա,  
Էրեվան, էլլու յար,  
Ինձոր զցեմ՝ կոսսա,  
Ե՞րբ կգաս, թելլու յար:  
Էրեվանա քավոր եմ,  
Էրեվան, էլլու յար,  
Զայի փնջի սովոր եմ,  
Ե՞րբ կուզաս, թելլու յար:  
Էրեվան դուքան-դուքան,  
Էրեվան, էլլու յար,  
Ճերմակ շուշա ըստափան,  
Ե՞րբ կգաս, թելլու յար:

## 17. ԽԵԶՈՐ ՔԱՂԻ

Խնձոր քաղի, գնաց ընկավ էն աղեն,  
Մեր մալլի ծաղիկը տարավ շան գյաղեն,  
Սարի գլխին տուն ունեմ,  
Աղջի Անուշ,  
Միշին ոսկի բռն ունեմ,  
Թուշդ անուշ;  
Խնձոր քաղի գնաց ընկավ էն աղեն,  
Մեր մալլի ծաղիկը տարավ շան գյաղեն,

## 18. ՄԱՐԱԼՈ

Մարալո, ջան մարալո՛,  
Մարալո՛,  
Մարալո, ծառիս տակը  
Պաղ աղբյուր,  
Մարալո, արծաթի թաս  
Ոսկե ջուր,  
Մարալո, մի թաս կուզեմ  
Էրկու տուր:  
Մարալո, ուրախ կենանք  
Ես ու դու  
Մարալո, ջան մարալո՛,  
Մարալո՛:  
Մարալո, ձեր հանդումը  
Վար կանեմ,  
Մարալո, ձեր խնձորին  
Քար կանեմ,  
Մարալո, քեզի ընձի  
Ցար կանեմ:  
Մարալո, ջան Մարալո՛,  
Մարալո՛:  
Մարալո, ջան Մարալո՛,  
Մարալո՛:

## 19. ՀԱՆԴՈՒՄԸ ՄՆԱՅ

Հանդումը մնաց յարս,  
Բանդումը մնաց յարս:  
Հանդեն զաս գեղը մտնես,  
Հանդումը մնաց յարս,  
Իմ զցած տեղը մտնես,  
Բանդումը մնաց յարս:  
Կայնել ես ախա-քախա,  
Հանդումը մնաց յարս,  
Լաշակիդ տուտը կախ ա,  
Բանդումը մնաց յարս:  
Կայնել ես ախպրի ակին,  
Հանդումը մնաց յարս,  
Նման ես արեգակին,  
Բանդումը մնաց յարս:

## 20. ՀԱՆԴԻ ԼԱԼԱ

Հանդի լալա էր յարս,  
Աղեի բալա էր յարս:  
Ո՞ւր գնացիր, ո՞ւր եկար,  
Հանդի լալա էր յարս,  
Դուն իմ սրտին դուր եկար,  
Աղեի բալա էր յարս:  
Աղվան-Օսան իմ յարս,  
Հանդի լալա էր յարս (2)  
Աղեի բալա էր յարս:  
Խնձոր քաղի դուր եկավ,  
Աղվան-Օսան իմ յարս,  
Յարս մեր տուն հյուր եկավ,  
Աղեի բալա էր յարս:

## 21. ԷԼԻՆՈ ՅԱՐ

Քթկալը ճիտս եմ զցել,  
Էլինո յար,  
Շեկ յարը միտս եմ զցել,  
Թելինո յար:  
Սարի խոտը կանանչ ա,  
Էլինո յար,  
Աղջիկ տղին ճանանչ ա,  
Թելինո յար:  
Էլել եմ Ալագյազը,  
Էլինո յար,  
Զեմ առնի մալամազը,  
Թելինո յար:  
Ելա սարը սար տեսա,  
Էլինո յար,  
Կարմիր գյուղպով յար տեսա,  
Թելինո յար:  
Ալագյազ ուխտ եմ արել,  
Էլինո յար,  
Մազես ջուխտ եմ արել,  
Թելինո յար:

## 22. ՀԱՐՍ ՔՈ ՇՈՒՇՊԵՆ

Հարս քո շուշպեն կզնզնզա,  
Զես կրնա խաղա՝ մի տնգտնզա,  
Ես քո դարդեն հիվանդ ընկա,  
Գլորվեցա բախչեն ընկա:  
Հարս, պապուշդ կճռճա,  
Խաս շորերը կսոսա,  
Հարս քո շուշպեն կզնզնզա,  
Զես կրնա խաղա՝ մի տնգտնզա:

## 23. ԱՇ ՔՅԱՄԱՐՍ

ԱՇ, քյամարս, քյամարս,  
Ղարսա բերած, քյամարս,

ԱՇՅ, քլամարս, քլամարս,  
Հարս ա բերած թամարս:  
Սիրուն աղջկա տերը,  
ԱՇՅ, քլամարս, քլամարս,  
Զի տախս չն խորթ մերը,  
Դարսա բերած քլամարս:  
Սիրուն աղջիկ նազ ունես,  
ԱՇՅ, քլամարս, քլամարս,  
Կարավի փարպաղ ունես,  
Հարս ա բերած թամարս:

#### 24. ԱՐԵՎ. ԴԻՊԵ

Սիրուն արի մեր օրեն,  
Արև դիպի, զառել ա,  
Կարեմ մինթանիդ քյորեն,  
Սերդ սիրտս վառել ա,  
ԱՇՅ, զարսն ա, զարսն ա,  
Արև դիպի, զառել ա,  
Իմ յար քոնից սիրուն ա,  
Սերդ սիրտս վառել ա:  
Թաս տվեք բարեմախթեմ,  
Արև դիպի զառել ա,  
Բալքիմ թամագին հաղթեմ,  
Սերդ սիրտս վառել ա:

#### 25. ԽՈՐՈՍ ԷՐ

Խորոտ էր մայլի տղեն,  
Կոլոտ էր մայլի տղեն,  
Տնգող, տնգող  
Ման արի,  
Ջերդ զատարկ  
Տուն արի:  
Էս առվի շուրը սառն ա,  
Ճուր բերոց իմ յարն ա,  
Տնգող, տնգող  
Ման արի,  
Ջերդ զատարկ  
Տուն արի:  
Էս առոն շուր ա զալի,  
Մի տեսեք ուր ա զալի,  
Տնգող, տնգող  
Ման արի,  
Իրիկոնը  
Տուն արի:

#### 26. ՏԻՐԱՆ-ՏԻՐԱՆ

Արփաշալի քլանարը,  
Տիրան-Տիրան իմ յարը,  
Վառավ սրտիս ֆանառը,  
Հասած ծիրան իմ յարը:

Սիրեկանից հանողը,  
Տիրան-Տիրան իմ յարը  
Բալեն տանի գրողը,  
Հասած ծիրան իմ յարը:

#### 27. ԱՂՋԻ ԹԱՄԱՐ

Աղջի թամար,  
Ոնքդ կամար,  
Ցա՛ր, յա՛ր,  
Դուն ստեղծվել ես  
Ինձ համար  
Ցա՛ր, յա՛ր:  
Սարի կրակն անցավ,  
Աղջի թամար,  
Ոնքդ կամար,  
Ցա՛ր, յա՛ր,  
Ցարս ինձի լր մոռցավ,  
Դուն ստեղծվել ես  
Ինձ համար,  
Ցա՛ր, յա՛ր:  
Սարին կրակ եմ արել,  
Աղջի թամար,  
Ոնքդ կամար,  
Ցա՛ր, յա՛ր,  
Ցարիս չուղար եմ արել,  
Դուն ստեղծվել ես  
Ինձ համար  
Ցա՛ր, յա՛ր:

#### 28. ԿԱՐԲԻՆԻ ՑԱՅԼԻ...

ՀաՇՅ առնում եմ, առնում եմ,  
Թերես էկավ, թռնում եմ,  
Գնացել ես, էկել ես,  
ՀաՇՅ առնում եմ, առնում եմ,  
Ուզոն բոյդ քոքել ես,  
Թերես էկավ, թռնում եմ:  
Գնացիր, էկար բարով,  
ՀաՇՅ առնում եմ, առնում եմ,  
Ինձի տվիր ժնո քարով,  
Թերես էկավ, թռնում եմ:  
Մուզնիս շուրը սառն ա,  
ՀաՇՅ առնում եմ, առնում եմ,  
Մուզնի էրթողն իմ յարն ա,  
Թերես էկավ, թռնում եմ:

#### 29. ԵՍ ՄԱՐԱԼ

Ես մարալ, յարս մարալ,  
Մեկ ու ճար յար:  
Աղջի, անունդ Մայի,  
Ես մարալ, յարս մարալ,

Ճակատդ բոլոր շահի,  
ես մարալ, յարս մարալ,  
Մեկ ու ճար, յար:  
Աղջի, դու ի՞նչ լավ բան ես,  
ես մարալ, յարս մարալ  
ինձի մտահան շանես,  
ես մարալ, յարս մարալ,  
Մեկ ու ճար յար:

### 30. ԹԵԼՈ

Թելլո, օ՛յ, թելլո օ՛յ,  
թելլո շան,  
Սկիկ, սիրոն, յարս շան,  
Մեռա բաղում բանելին,  
թելլո օ՛յ, թելլո օ՛յ,  
թելլո շան,  
Մի կողմեն ջուր անելին,  
Սկիկ, սիրոն յարս շան,  
Մառերին թուփ չընաց,  
թելլո օ՛յ, թելլո օ՛յ,  
թելլո շան.  
Դարդիս դարման անելին,  
Սկիկ, սիրոն, յարս շան,  
Նստած տեղս քար չընեմ,  
թելլո օ՛յ, թելլո օ՛յ,  
թելլո շան,  
Զիմանաս թե յար չընեմ,  
Սկիկ սիրոն յարս շան,  
Ա՛յ, անիրավ շան աշխարհ,  
թելլո օ՛յ, թելլո օ՛յ,  
թելլո շան,  
Բաղ ունեմ ու բար չընեմ,  
Սկիկ սիրոն, յարս շան:

### 31. ՀՈՅ ԻՄ ՆԱԶԱՆԻ...

Հո՞յ իմ նազանի յարը,  
Դուման ա վերին սարբ:  
Ոչխարն արել եմ գուզը,  
Հո՞յ իմ նազանի յարը,  
Ջոկիլ եմ զարագյոզը,  
Դուման ա վերին սարբ:  
Բարակ բարդու բարին տես,  
Հո՞յ իմ նազանի յարը,  
Էն անիրավ յարին տես,  
Դուման ա վերին սարբ:  
Բարակ առնմ ջուր կուզա,  
Հո՞յ իմ նազանի յարը.  
Նազանն ընձի դուր կուզա,  
Դուման ա վերին սարբ:

32. ԲՈՒԹԵԼ-ԲՈՒԹԵԼ  
Բութել-բութելս, տարան,  
Յար շան,  
Իմ յարին Գյանչա տարան:  
Մե էր շրանի շոնը, ամա՞ն,  
Բութել-բութելս տարան,  
Յար շան,  
Զի տանի յարիս քոնը, յաման,  
Իմ յարին Գյանչա տարան:

### 33. ԳՅՈՒԼԱ-ԳՅՈՒԼԱ

Մարգերի գոլերը,  
Միպտակել է, յար շան,  
Բլուզիդ գոլերը,  
Վա՛յ, վա՛յ, գյուզա յարս:  
Մեր սարը բանցը ա,  
Ինքը սև ա, յարս,  
Արունը քաղցը ա,  
Վա՛յ, վա՛յ, գյուզա յարս:  
Իմ անիրավ մերը,  
Դնեմ սելը, աղջի,  
Տանեմ Տիրամերը,  
Վա՛յ, վա՛յ, գյուզա յարս:  
Իմ անիրավ ազին,  
Դնեմ սելը, աղջի,  
Տանեմ Աստվածածին,  
Վա՛յ, վա՛յ, գյուզա յարս:  
Հինը հել եմ արել,  
Մարգը մեջ եմ արել,  
Թազա յար եմ ճարել,  
Վա՛յ, վա՛յ, գյուզա յարս:  
Յարս անցավ դեսը,  
Գուզն եմ ասում, աղջի,  
Տարավ կյանքիս կեսը,  
Վա՛յ, վա՛յ, գյուզա յարս:  
Նստեմ պարախոզը,  
Գուզն եմ ասում, աղջի,  
Էրթամ յարիս մոտը  
Վա՛յ, վա՛յ, գյուզա յարս:  
Պարախոզն էր պեռվի,  
Դուզն եմ ասում, աղջի,  
Քու կրակով էրվի,  
Վա՛յ, վա՛յ, գյուզա յարս:  
Տալոն ալոր մաղեց,  
Մի խոսք ասեի, աղջի,  
Իմ շիգյարը դաղեց,  
Վա՛յ, վա՛յ, գյուզա յարս:  
34. ՅԱՐ ԶԱՆ  
Յար շան ուզումիշ արա,  
Պարդ դուզումիշ արա:

Սիրահարի սերիցը,  
Յար շան ուզումիշ արա,  
Ես վառվա քու ձեռիցը,  
Պարդ դուզումիշ արա:  
Պարբաշի՛, պարդ քաշի,  
Յար շան ուզումիշ արա,  
Էլ դես ու զեն մի քաշի,  
Պարդ դուզումիշ արա:  
Էսօր նորը նորել ա,  
Յար շան ուզումիշ արա,  
Յարիս քունը կորել ա,  
Պարդ դուզումիշ արա:  
—Ա՛յ պարբաշի, պարբաշի,  
Յար շան ուզումիշ արա,  
Պարողներին մեջ քաշի,  
Պարդ դուզումիշ արա:

### 35. ԱՐԵՒԻ ԲԱԼԱ

Ես աղջիկ եմ նշանելու,  
Աղիկ բալա,  
Էզուց կզան տանելու,  
Սիրովդ վառա:  
Կտուր կայնողին մեռնեմ,  
Աղիկ բալա,  
Քյաքու սանդողին կառնեմ,  
Սիրովդ վառա:  
Կտուր կայնողը ես եմ,  
Աղիկ բալա,  
Քյաքու սանդողը ես եմ,  
Սիրեցի առա:  
Անտեր մնար քաղներ,  
Աղիկ բալա,  
Թափակ գերին ծաղկներ,  
Սիրովդ վառա:

### 36. ԶԱԼՈ

Գարնան արե ա արել,  
Զալո՛, ձալո՛:  
Յարս բարե ա արել,  
Զալո՛, ձալո՛:  
Գաղթականի վարժապետին առել եմ,  
Զալո՛, ձալո՛:  
Գեղականին վառել եմ,  
Զալո՛, ձալո՛:  
Յար շան, արևիդ մեռնեմ,  
Զալո՛, ձալո՛:  
Ղրկած բարեդ կառնեմ,  
Զալո՛, ձալո՛:  
Գաղթականի վարժապետին առել եմ,  
Զալո՛, ձալո՛:  
Գեղականին վառել եմ  
Զալո՛, ձալո՛:

Թե սուտ ասեմ՝ քոռանամ,  
Զալո՛, ձալո՛:  
Ենկ յարին ոնց մոռանամ,  
Զալո՛, ձալո՛:  
Գաղթականի վարժապետին առել եմ,  
Զալո՛, ձալո՛:  
Գեղականին վառել եմ,  
Զալո՛, ձալո՛:  
Տերտերն ասեց ամոթ ա,  
Զալո՛, ձալո՛:  
Աղջիկ տղին ծանոթ ա,  
Զալո՛, ձալո՛:

### 37. ՅԱՐ ՍՈՆԱ

Խոտ քաղողը իմ հերն ա,  
Յա՛ր Սոնա,  
Յա՛ր Սոնա,  
Հաց բերողը իմ մերն ա,  
Իմ ուզածը Վարսոն ա:  
Արտ եմ ցանել, գարի ա,  
Յա՛ր Սոնա,  
Յա՛ր Սոնա,  
Էն ի՞նչ վերան տարի ա,  
Իմ ուզածը Վարսոն ա:  
Հաց եմ թխե փրփրի,  
Յա՛ր Սոնա,  
Յա՛ր Սոնա,  
Քեւ ախազուրը զրի,  
Իմ ուզածը Վարսոն ա:

### 38. ՄԱՇԻՆԵՆ ԷԿԱՎ

Մաշինեն էկավ  
Ակները շուշա,  
Մաթոն շեմ առնի,  
Աղի շան,  
Վարսոն անուշ ա:  
Մաշինեն էկավ,  
Գոռալին գնաց,  
Ա՛մ, ինչ անեմ  
Աղի շան,  
Վարսոն մնաց:  
Մաշինեն էկավ,  
Ակները շուշա,  
Մաթոն շեմ առնի,  
Աղի շան,  
Վարսոն անուշ ա:

### 39. ՄԱՌԻ ԲԱՐԸ

Մարի բարը նուշ կըլնի,  
Բարեդ անուշ կըլնի,  
Արի տանեմ մեղի հարս,

թե չէ մնա ուշ կը լիի:  
 Ղարաֆիլը դեղին ա,  
 Քո անոնք Հեղին ա,  
 Ճամփա տվեք թող տուն գա,  
 Իմ յարը ձեր գեղին ա:  
 Էս ֆայտոնը մերն ըլմեր,  
 Ակները կարմիր ըլներ,  
 Յարս անցնի ճամփեռով,  
 Երթամ, հասնեմ յարիս քով:

#### 40. ԱՐԱԲԱՆԻ ԶԱՆԳՈՒԱԿՈՒՄԸ

Կարմիր վարդը, վարդ շունեմ,  
 Չիլանաս թե դարդ շունեմ,  
 Գիտես, թե ես մենակ եմ,  
 Ու սիրելի յար շունեմ:  
 —լելե՛, լելե՛, լելե՛ լե՛,  
 Համբարձում յայլա,  
 Յայլա ջան յայլա,  
 Համբարձում  
 Յայլա  
 Յայլա ջան,  
 Յայլա  
 Լավ օրեր  
 Յայլա,  
 Յայլա ջան,  
 Յայլա:

Երնեկ քեզի, դարդ շունես,  
 Օտար աշխարք յար շունես,  
 Դարդն էկել ա ինձ տարել,  
 Դու իսկի խաբար շունես:  
 —լելե՛, լելե՛, լելե՛ լե՛...

#### 41. ԱՅ ԹԼՈՒԶԸ...

Գութանով վար եմ անում,  
 Բլուզը,  
 Դուշմանին քար եմ անում,  
 Բլուզը.  
 Ա՛յ բլուզը,  
 Բլուզը, բլուզը,  
 Ղարաֆիլիսի դուզը,  
 Բլուզը:  
 Արտիս միջին հով քամի,  
 Բլուզը,  
 Քոնս անուշ կտանի,  
 Բլուզը,  
 Ա՛յ բլուզը,  
 Բլուզը, բլուզը,  
 Ղարաֆիլիսի դուզը,  
 Բլուզը:

#### 42. ԱՅ, ՍԱՐԻ ՏՂԱ

Ա՛յ սարի տղա,  
 Զան, սարի տղա,  
 Բաղվան ես,  
 Բաղրգան ես,  
 Դե, արի տղա:  
 Կբերես ոսկին,  
 Կզամ քո խոսքին,  
 Զես բերի ոսկին,  
 Զեմ գա քո խոսքին:  
 Կբերես ալը,  
 Կը հագնեմ շալը,  
 Զես բերի ալը,  
 Զեմ հագնի շալը:  
 Այս սարի տղա...  
 Կը բերես սանդր,  
 Կը նստեմ ծանդր,  
 Զես բերի սանդր,  
 Զեմ նստի ծանդր:  
 Կբերես կոշիկ,  
 Կը հագնեմ մաշիկ,  
 Զես բերի կոշիկ  
 Զեմ հագնի մաշիկ:  
 Ա՛յ սարի տղա,  
 Կբերես գոտիկ,  
 Կզամ քեզ մոտիկ,  
 Զես բերի գոտիկ  
 Զեմ գա քեզ մոտիկ:  
 Ա՛յ սարի տղա:

#### 43. ՄՈՒԲԱԴ ԳԵՏԻ

Մուրադ գետի շայիբների բոլորը,  
 Ես մի մարալ, դարդես ընկա շոլերը:  
 Էսօր ուրբաթ ա, պաս ա,  
 Մուրադ գետի շայիբների բոլորը:  
 Մոցինդ արծաթի թաս ա,  
 Ես մի մարալ, դարդես ընկա շոլերը:  
 Էլել եմ սարի ուսը,  
 Մուրադ գետի շայիբների բոլորը,  
 Բռնեմ արևի լուսը,  
 Ես մի մարալ դարդես ընկա շոլերը:  
 Ղոնադ էկավ էն սարից,  
 Մուրադ գետի շայիբների բոլորը,  
 Խաբար բերեց իմ յարից,  
 Ես մի մարալ, դարդես ընկա շոլերը:

#### 44. ԿԱՅՆԱ ՔԱՐԻՆ

Կայնա քարին զուշ էլա,  
 Անուշ ջան,  
 Եթիմ տղի թուշ էլա,

Քեզի զուրբան,  
 Ձանեշա՞ն:  
 Վարդի ծառին փուշ կըլնի,  
 Անուշ չան,  
 Նշի ծառին նուշ կըլնի,  
 Քեզ զուրբան,  
 Ձանեշա՞ն:  
 Աւ բլուզգ կարեցի,  
 Անուշ չան,  
 Գողին սաղափ շարեցի,  
 Քեզ զուրբան,  
 Ձանեշա՞ն:  
 Գդակդ ծուն ևս դրել  
 Անուշ չան,  
 Աշրդ մեր զուն ևս դրել,  
 Ձանեշա՞ն:

#### 45. ՕՍԱՆ ՑԱՐ, ՑԱՐ

Օսան յա՞ր, յա՞ր ու յամա՞ն,  
 Ասա՞ դարդի իմանամ:  
 Ալավազը մեր սարն ա,  
 Օսան յա՞ր, յա՞ր ու յամա՞ն,  
 Սար զնացողն իմ յարն ա,  
 Ասա՞ դարդի իմանամ:  
 Ալավազ բարձր սարին,  
 Օսան յա՞ր, յա՞ր ու յամա՞ն,  
 Էրթամ հասնեմ իմ յարին,  
 Ասա դարդի իմանամ:

#### 46. ԱՄԱՆ ՄԱՐՈ

Ամա՞ն, Մարո՛, Մարո՛,  
 Սաղանդարի յարո,  
 Զադիր գարկեմ էն յարին,  
 Ամա՞ն, Մարո՛, Մարո՛,  
 Բալքի գտնեմ էն յարին,  
 Սաղանդարի յարո:  
 Ոչխարը սարի ուսին,  
 Ամա՞ն, Մարո՛, Մարո՛,  
 Ես արկ եմ, գու լուսին,  
 Սաղանդարի յարո:

#### 47. ՂԱՐՍԱԾ ԶՈՒՐԾ

Ղարսա շուրը սառել ա,  
 Ղամեն թևս տարել ա,  
 Մի լոթի-փոթի աղջիկ,  
 Ուշ ու միտքս տարել ա:  
 Ղարսա բերդը բլել ա,  
 Յարս մեջին քնել ա,  
 Զեն ավի, ձենս շառավ,

էս ինչ անուշ քնել ա:  
 Ղարսա շուրը.....

#### 48. ԱԼԱԳՅՈԶԼՈՒ

Ալագյոզլու, նազու դիլբար,  
 Թուփ էրեսիդ խալին զուրբան:  
 Յար կալնել ես կաժ կմանես,  
 Ալագյոզլու, նազու դիլբար,  
 Յա՞ր, արեգակի նման ես,  
 Թուփ էրեսիդ խալին զուրբան:  
 Յար կանգնել ես աղբրի ափին,  
 Ալագյոզլու, նազու դիլբար,  
 Յա՞ր, շող կուտաս արեգակին,  
 Թուփ էրեսիդ խալին զուրբան:

#### 49. ԳՅՈՒԽԱ-ԳՅՈՒԽԱ

Գյուշա՛, գյուշա՛, յարս,  
 Բամբակի բուշա, յարս:  
 Գնա՛, գնա՛, հետիդ եմ, յա՞ր չան,  
 Ալ խնձոր եմ չերիդ եմ, յա՞ր չան,  
 Դու անց կացար հուշա-հուշա, յա՞ր չան,  
 Դու նման ես բամբակի բուշա, յա՞ր չան:

#### 50. ԱՅ ԼՈԹԻ ՑԱՐ ԶԱՆ

Բամբակ եմ ցանել դող ա,  
 Ա՛յ լոթի յար չան,  
 Մի յար եմ սիրել թազա,  
 Կոներդ մարզան:  
 Դամբուլի կոթը քերեմ,  
 Ա՛յ լոթի յար չան,  
 Մեկ նստի գինի բերեմ,  
 Կոներդ մարզան:  
 Կարմիր գինին թափեցինք  
 Ա՛յ լոթի յար չան,  
 Թազա փեսին խարեցինք,  
 Կոներդ մարզան:

#### 51. ԱՆՏԵՐ ՄՆԱՐ

Անտեր մնար կարմիր գիլասի ծառը,  
 Դարշին-մեխակ, յա՞ր չան, էրթանք մեր բաղը:  
 Բարակ եմ բարդու ծառ եմ,  
 Անտեր մնար կարմիր գիլասի ծառը,  
 Քեւելուց մարդ կվառեմ,  
 Դարշին-մեխակ, յա՞ր չան, էրթանք մեր բաղը:  
 Բոլ՛ք, թող թողը ըլնի,  
 Անտեր մնար կարմիր գիլասի ծառը,  
 Դուշմանիս գոզն ըլնի,  
 Դարշին-մեխակ, յա՞ր չան, էրթանք մեր բաղը:

Թուե՞ք, թող մաշիկ ծակվի,  
Անտեր մնար կարմիր գիլասի ծառը,  
Մաշիկ կարողը սաղ ընի,  
Դարչին-մեխակ, յա՞ր ջան, էրթանք մեր բաղը:

### 52. ԷԼԻ ԼՈԹԻ...

Գնա արի մահ արի,  
Էլի լոթի յար ջան,  
Բալիշ դնեմ, յան արի,  
Հոգուդ մեռնեմ, յա՞ր ջան:  
Գնա արի շաղին տուր,  
Էլի լոթի յար ջան,  
Կարմիր գլուզա յարին տուր,  
Հոգուդ մեռնեմ, յա՞ր ջան:  
Զաղացի դուրը շիման,  
Էլի լոթի յար ջան,  
Էն յարին չկար իման,  
Հոգուդ մեռնեմ, յա՞ր ջան:  
Աղջի էրթանք մեզ քաղցան,  
Էլի լոթի յար ջան,  
Երեսդ ա գյունաբախան,  
Հոգուդ մեռնեմ, յա՞ր ջան:

### 53. ՔՅՈՐԾՎԱԽԻ ՏՂԱ

Բարակ եմ՝ բարդու ծառ եմ,  
Մեր մայիս տղա,  
Քիվելուց մարդ կվառեմ,  
Քյորօ՛ղլու տղա:  
Բարակ բարդու բարին եմ,  
Մեր մայիս տղա,  
Էն անիրավ յարին եմ,  
Քյորօ՛ղլու տղա:  
Բարակ բարդուն բար չկա,  
Մեր մայիս տղա,  
Փիս աղջկան յար չկա,  
Քյորօ՛ղլու տղա:  
Սարին իշան ջոխս աղջիկ,  
Մեր մայիս տղա,  
Ջիսի գոգնոցն էր լաստիկ,  
Քյորդղլու տղա:

### 54. ԶԻՆ ՕՂԱՆ

Չի՞ն, չի՞ն, չի՞ն օղան,  
Զարքար շուխա,  
Չիթ ալխալուլ,  
Չի՞ն օղան:  
Արազափը շիման ա,  
Չի՞ն, չի՞ն, չի՞ն օղան,  
Նանըդ գալդ շիմանա,  
Չի՞ն, չի՞ն, չի՞ն օղան,

Էսօր հանդը հաց տարա,  
Չի՞ն, չի՞ն, չի՞ն օղան,  
Ցարս հոն չէր, եդ դառա,  
Չի՞ն, չի՞ն, չի՞ն օղան,  
Զարքար շուխա, չի՞ն օղան:

### 55. ՍԱՐ, ՍԱՐ

Սա՞ր, սա՞ր,  
Ես սարերի ծաղիկն եմ,  
Չա՞ն, չա՞ն,  
Ես կանի քույրիկն եմ:  
Սա՞ր, սա՞ր,  
Էն սարին սար չեմ ասի,  
Չա՞ն, չա՞ն,  
Փիս տղին յար չեմ ասի:  
Սա՞ր, սա՞ր,  
Սարի խոտը կանալ ա,  
Չա՞ն, չա՞ն,  
Աղջիկ տղին ճանալ ա:  
Սա՞ր, սա՞ր,  
Սարը սարին նման չի,  
Չա՞ն, չա՞ն,  
Աղջիկ տղին հավան չի:

### 56. ՄԱՆԴՐ, ՄԱՆԴՐ

Մանդր, մանդր,  
Տասներկու տարեկան եմ,  
Մանդր, մանդր,  
Քո սրտին դուրեկան եմ:  
Հավեն ամպե, կզա ձուն,  
Մանդր, մանդր,  
Տասներկու տարեկան եմ,  
Օրը մթնե չի գա տուն  
Մանդր, մանդր,  
Քու սրտի սիրեկան եմ:

### 57. ԱՅ ՆԱՆԻ

Այ նանի, ցավդ տանեմ,  
Դարգերս էլ ո՞ւմ պատմեմ,  
Ամա՞ն,  
Դարգերս էլ ո՞ւմ պատմեմ,  
Այ յար, այ յար, կայնել ես,  
Մարա ալլուի բռնել ես:  
Բարկ տվի առար ու  
Մագամ թարկս տվել ես:  
Այ նանի, ցավդ տանեմ,  
Դարգերս էլ ո՞ւմ պատմեմ,  
Ամա՞ն,  
Դարգերս էլ ո՞ւմ պատմեմ:  
Ճամփիցը մոլորել ես,  
Ինձանից խռովել ես,

Դե ևս զատի բան ասեմ,  
Քաղցր խոսք ու չան ասեմ:  
Այ նանի, ցավդ տանեմ,  
Դարդերս էլ ում պատեմ,  
Աման,  
Դարդերս էլ ում պատեմ:

58. ՄԱՅՐԻԿԻՆ ՔՈՒՅՐԻԿԻՆ  
Մայրիկին ֆալտոն բերեք,  
Քույրիկին՝ կառեթ,  
Հայրիկին էշի կաշկա,  
Ակե՛ր չունենա,  
Ակե՛ր չունենա,  
Ակե՛ր չունենա,  
Մեղք ու կրակ աւ  
Մայրիկին պալտոն բերեք,  
Քույրիկին՝ ժակետ,  
Հայրիկին մի հին շուլսա,  
Թռե՛ր չունենա,  
Թռե՛ր չունենա,  
Թռե՛ր չունենա,  
Դարդ ու բալա յաւ  
Մեղք ու կրակ աւ  
Մայրիկին տոմի բերեք,  
Քույրիկին՝ կալոշ,  
Հայրիկին մի ջուխտ տրեխ,  
Տակե՛ր չունենա,  
Տակե՛ր չունենա,  
Տակե՛ր չունենա,  
Մեղք ու կրակ աւ  
Մայրիկին ամեն օր համամ,  
Քույրիկին՝ ութ օրը մեկ,  
Հայրիկին՝ զատկե-զատիկ,  
Սապո՞ն չունենա,  
Սապո՞ն չունենա,  
Սապո՞ն չունենա,  
Դարդ ու բալա յաւ

### 59. ԱՐԻ ՅԱՄԱՆ

Արի յաման, բարի յաման,  
Բարն անուշ կընի,  
Հեռու տեղից,  
Սարի գեղից,  
Ցարն անուշ կընի:  
Ալ մինթանա ես ուզում, ուզում,  
Բարն անուշ աւ,  
Իմ սիրտը քեզ էր ուզում,  
Ցարն անուշ աւ,  
Արի յաման, բարի յաման,  
Բարն անուշ կընի:

Կապել է կարմիր գոտիկ,  
Բարն անուշ աւ,  
Մի լար ունեմ խորոտիկ,  
Ցարն անուշ աւ:

### 60. ԱՊՁԻ ԴՈՒԴՈՒՆ

Բալկոնը ման ես զալի,  
Բալկոնը ման ես զալի,  
Կտոր-կտոր ես զալի,  
Կտոր-կտոր ես զալի,  
Աղջի՛ դուդուլ,  
Ջա՞ն դուդուլ,  
Ջա՞նդի՛ դուդուլ,  
Ջա՞ն, դուդուլ,  
Դուդուլ կայնե կամբչին,  
Դուդուլ կայնե կամբչին,  
Ոսկե զնդերն ականչին,  
Ոսկե զնդերն ականչին,  
Աղջի՛ դուդուլ,  
Ջա՞ն դուդուլ,  
Ջա՞նդի՛ դուդուլ,  
Ջա՞ն, դուդուլ:

### 61. ԱՊՁԻ ԱՆՆԱ

Աղջի Աննա, դլինա,  
Սերդ տանն ա, դլինա,  
Ասա դուրս զա, յաման,  
Ինձի մի խոսք տա, դլինա:  
Աղջի Աննա, դլինա,  
Ինձ մի մոռնա, դլինա,  
Ես ձեր դռնեն, յամա՞ն,  
Էլ շեմ զառնա, դլինա:

### 62. ՏԱՄԱՆԵՐԿՈՒ ՕՐ

Տամաներկու օր, տամաներկու օր  
Վառա ես,  
Անձրկ զանեց, տղկա ես:  
Տամաներկու օր, տամաներկու օր  
Վառա ես,  
Արև զանեց, չորցա ես:  
Տամաներկու օր, տամաներկու օր  
Վառա ես:  
Մե պոտ ջուր լից ախպուրեն,  
Տամաներկու օր, տամաներկու օր  
Վառա ես,  
Քեզի սիրի շառա ես:

### 63. ԱՅ ՀԵՎԱ

Այ հեա, հեա սիրտս,  
Ճնճղուկի թե ա սիրտս,

իմ տոռն լեն ու մելդան ա,  
Ա՛յ հեա, հեա սիրոս,  
Մի յար ունեմ չելքան ա,  
Ճնճղուկի թէ ա սիրոս:  
իմ հոր գարին քարմաղած,  
Ա՛յ հեա, հեա սիրոս,  
իմ հոր հարսը շարմաղած,  
Ճնճղուկի թէ ա սիրոս:

#### 64. ԱՅ ՏԱՐԻ

Ա՛յ էս տարի, էս տարի,  
հնձոր քիչ կա էս տարի,  
Որ ես առնեմ,  
Բեռներ բռնեմ,  
էպվան ճամփեմ,  
իմ յարին, իմ յարին:  
Ա՛յ էս տարի, էս տարի,  
Խաղող քիչ կա էս տարի,  
Որ ես ելնեմ,  
Սելեր բռնեմ,  
էպվան ճամփեմ,  
իմ յարին, իմ յարին:  
Ա՛յ էս տարի, էս տարի,  
Զամիչ շատ կա, էս տարի,  
Առնեմ, դառնամ,  
Բեռներ բառնամ,  
էպվան ճամփեմ,  
իմ յարին, իմ յարին:

#### 65. ԴՈՒԶՔՅԱՆԴ

Դուզքյանդի, Դուզքյանդի դուրանը,  
Յար ինձ վառեց, վա՛յ քո դոկած  
Նկա՛րը, նամա՛կը, նշա՞նը:  
Արագի խոր աղքը,  
Դուզքյանդի, Դուզքյանդի դուրանը,  
Զալեք թաղա զայդեք,  
Յար ինձ վառեց, վա՛յ քո դոկած  
Նկա՛րը, նամա՛կը, նշա՞նը:  
Խաղ կկանչեմ սեգ սարին,  
Դուզքյանդի, Դուզքյանդի դուրանը,  
Խարար կառնեմ շեկ յարեն,  
Յար ինձ վառեց, վա՛յ քո դոկած  
Նկա՛րը, նամա՛կը, նշա՞նը:

#### 66. ՍՈՒԻՓԵՆ ՓՈԱԾ

Սուփրեն փոած, վրեն խորոված հավ ըլնի,  
Ով չի ուզի իր առածը լավ ըլնի:  
Տանս տակը բաղ կանեմ,  
Քեզ ինձի զոնաղ կանեմ,  
Կերովաւմի ժամանակ,  
Քեֆս, հալս շաղ կանեմ:

#### 67. ՎԱՅ ԱՄՊԱՆ

Վա՛յ աման, աղե ջան, էրվա ես,  
Շեկ յարի կրակով վառվա ես:  
Սուրբ Ակոբա դշերը,  
Վա՛յ աման, աղե ջան, էրվա ես,  
Ցարիս կարմիր թշերը,  
Շեկ յարի նամակով վառվա ես:

#### 68. ԱՅ ԽԱՆԼՈՒ

Ա՛յ խանլու,  
Խանլու յարս,  
Նշանլու, Թելլու յարս:  
Զանցաֆիլը դեղին ա,  
Ա՛յ խանլու,  
Խանլու յարս,  
Իմ յարը ձեր գեղին ա,  
Նշանլու, Թելլու յարս:  
Մինթանիդ քորեն խաս ա,  
Ա՛յ խանլու,  
Խանլու յարս:  
Շեկ մազերիդ կըսազա,  
Նշանլու, Թելլու յարս:  
Մաղիկ քաղի լալա էր,  
Ա՛յ խանլու,  
Խանլու յարս,  
Նշանլու, Թելլու յարս:

#### 69. ՍԱՐԻ ԱՂՋԻԿ

Սարի աղջիկ ես,  
Շատ գեղեցիկ ես,  
Աշքդ խումար,  
Ունքդ կամար,  
Սարի աղջիկ ես:  
Մաղիկ ես, ծաղիկ ես,  
Փնջավոր աղջիկ ես:  
Աշքդ խումար,  
Ունքդ կամար,  
Սարի աղջիկ ես:

#### 70. ՇԵԿՈ ԶԱՆ

Շեկո ջան, մազերդ,  
Կամար են ունքերդ,  
Կարդա նամակս,  
Կառնես փափակս,  
Շեկո ջան, մազերդ,  
Կամար են ունքերդ:

#### 71. ՔԱՐԱԲԻՆ ԱՐԻ

Քարաբին արի, տարա օդեն,

Նոր և գալիք յարիս մոտեն,  
Զկշտացա համեն, հոտեն:  
Զնդդնդալեն շայ կրերեմ,  
Զնդդնդալեն շայ կրերեմ,  
Զայեն հետո փոնչ կրերեմ:  
Կարմիր մարշան վզին շարած,  
Ռսկի մատնիք մատին դրած,  
Նոր ա էկել յարս օդեն,  
Զկշտացա համեն, հոտեն:  
Զնդդնդալեն շայ կրերեմ,  
Զնդդնդալեն շայ կրերեմ,  
Զայեն հետո փոնչ կրերեմ:

#### 72. ԼՈՐԻԿ ՅԱՐՍ

Էորիկ յարս տարել են,  
Իմ ձեռքիցը առել են,  
Աստված սիրեք ճար արեք,  
Միրտս կրակով վառել են:  
Առել են, տարել են,  
Միրտս կրակով վառել են:  
Քարար արի, համ էավ,  
Արավն էավ դում էավ,  
Աստված սիրեք ճար արեք,  
Յարս որտեղ դում էավ:  
Առել են, տարել են,  
Միրտս կրակով վառել են:

#### 73. ԾԱՌԻ ԵՍ ԵՄ

Մարը ես եմ, բարը դու ես  
Անուշ ջան,  
Իմ գովիլի յարը դու էս,  
Քե դուրբան:  
Գնա, արի, հետիդ եմ,  
Մարը ես եմ, բարը դու ես,  
Անուշ ջան,  
Ալ խնձոր եմ, չիրիդ եմ,  
Իմ գովիլի յարը դու էս,  
Քե դուրբան:

#### 74. ՅԱՐՍ, ՅԱՐՍ

Կանչում եմ՝ արի՛, արի՛,  
Յարը՛ս, յարը՛ս  
Բալիք աստված կատարի,  
Վառիր ջանըս  
Սև օձը մովիթ քորին,  
Յարը՛ս, յարը՛ս,  
Գեղը սիրումի կորքին,  
Վառիր ջանըս:  
Արավը շատացել աս,  
Յարը՛ս, յարը՛ս,

Ճամփեքը վատացել ա,  
Վառիր ջանըս:  
Յարս անցավ մեր դռնից,  
Յարը՛ս, յարը՛ս  
Բոնած ուրիշի կնմից,  
Վառիր ջանըս:

#### 75. ՕՍԱՆ ԶԱՆ

Օսան չա՞ն, արի տանեմ,  
Տանեմ բաղզաղի առնեմ:  
Էրթանք սար, բռնենք յալին,  
Օսան չա՞ն, արի տանեմ,  
Ընչլ՞ չես գա մեր մալլեն,  
Տանեմ բաղզաղի առնեմ:  
Օսան չա՞ն, բաղզվն արի,  
Օսան չա՞ն, արի տանեմ,  
Շամամի թաղովն արի,  
Տանեմ բաղզաղի առնեմ:  
Սարի գլոփի դուման էր,  
Օսան չա՞ն, արի տանեմ,  
Իմ ջանը քեզ դուրբան էր,  
Տանեմ բաղզաղի առնեմ:

#### 76. ՀՈՌՈՄ, ՀՈՌՈՄ

Աղջի Հոռոմ, հոռոմել ա յարս,  
Վարզը ձեռին թոռոմել ա յարս:  
Աղջի Հոռոմ, հարսանիք ես զնացել,  
Տոլմա չկա, սոված ես մնացել,  
Աղջի Հոռոմ, գրոզը քեզ տանի,  
Արժան չէլար մի քթոց դարմանի:  
Աղջի Հոռոմ, կերածդ ձավար ա,  
Հոզը գիմիդ առածդ տավար ա:  
Հոռոմ, Հոռոմ, հոռոմել ա յարս,  
Վարզը ձեռին թոռոմել ա յարս:

#### 77. ԱՂՋԻ, ԷՐՆԵԿ

Աղջի, էրնեկ ալ ըլնեմ,  
Թշիդ վրեն խալ ըլնեմ,  
Գովզդ անեմ աշխարքին,  
Սառցի նման հալ ըլնեմ:  
Ալ ըլնեմ, խալ ըլնեմ,  
Թեկ-թեկ ըլնեմ շալ ըլնեմ,  
Գովզդ անեմ աշխարքին,  
Սառցի նման հալ ըլնեմ:  
Աղջի՛, աղջի՛, դու սիրուն,  
Էրնեկ կտամ քու տիրուն,  
Դի շուտ արի մեր բաղը,  
Փոկենք շամամի թաղը:

78. ԱՌՎԻ ՎՐԵՒՆ  
Աղջի ինչ լավ մազ ունես,  
Առվի վրի նավն ա,  
Կաքավի փարվագ ունես,  
Նոր եմ սիրել, լավն ա:  
Աղջի, արի մեր բաղը,  
Առվի վրի նավն ա,  
Շախով կանչենք մեր խաղը,  
Նոր եմ սիրել, լավն ա:  
Աղջի, արի մեզ քաղհան,  
Առվի վրի նավն ա,  
Երեսդ գյունաբախան,  
Նոր եմ սիրել, լավն ա:

Աղջի, անոնդ ասա,  
Առվի վրի նավն ա,  
—Անոնս Անախաս ա,  
Նոր եմ սիրել, լավն ա:  
Աղջի, դու ի՞նչ լավ բան ես,  
Առվի վրի նավն ա,  
Ինձի մտահան շանես,  
Նոր եմ սիրել, լավն ա:  
Սիրել եմ սիր ու սավլով,  
Առվի վրի նավն ա,  
Ալամ—աշխարքի զայտով  
Նոր եմ սիրել, լավն ա:

#### 79. ԳՅՈՒԽ ՆՈՒԲԱՐԻՆ

Բամբակի տակին Գյուլ-Նուբարին,  
Ցա՛ր, յա՛ր,  
Սիրել եմ, թագա Նուբարին,  
Ցա՛ր, յա՛ր;  
Չանաք անենք, շանաք անենք,  
Ցա՛ր, յա՛ր,  
Բարդաններով բամբակ հանենք,  
Ցա՛ր, յա՛ր;  
Թաղա յարին Գյուլ-Նուբարին,  
Ցա՛ր, յա՛ր,  
Սիրել եմ թագա Նուբարին,  
Ցա՛ր, յա՛ր;  
Փեղ բռնի բամբակ հանենք,  
Ցա՛ր, յա՛ր,  
Բարդաններով մեր տուն տանենք  
Ցա՛ր, յա՛ր;  
Բամբակի տակին, Գյուլ-Նուբարին,  
Ցա՛ր, յա՛ր,  
Սիրել եմ թագա Նուբարին,  
Ցա՛ր, յա՛ր;

#### 80. ՑՈԼԱԼՈՎ

Ցոլալով, յար շան, արի,  
Թե չես գա, մուխդ մարի:

Մառիս տակը կանալ ա,  
Ցոլալով յար շան արի,  
Աղջիկ տղին ճանալ ա,  
Թե չես գա, մուխդ մարի:  
Ցուրտ արավ, ցուրը սառավ,  
Ցոլալով յար շան արի,  
Իմ յարը տուն լը դառավ,  
Թե չես գա, մուխդ մարի:  
Մառի վրեն դուշ էլավ,  
Ցոլալով յար շան արի,  
Խմածդ անուշ էլավ,  
Թե չես գա, մուխդ մարի:

#### 81. ԳՅՈՒԽԱ, ԳՅՈՒԽԱ

Գյուլա՛, գյուլա՛,  
Գյուլիրի Մարոյին,  
Աղեին ասա,  
Լավ պահի յարոյին:  
Գյուլա՛, գյուլա՛,  
Գյուլս Գյուլիրի ա,  
Քեզի մեռնեմ,  
Ցարըս լուեցի ա:  
Գյուլա՛, գյուլա՛  
Գյուլիրի Մարոյին,  
Աղեին ասա,  
Լավ պահի յարոյին:

#### 82. ԼՈՒՍՆԱԿԸ

Լուսնակը կեռ ու կամար,  
Աղջի վառա քեզ համար,  
Ցամա՞ն, էրվում հմ:  
Լուսնակ պատին թառել ա,  
Սերդ ինձի վառել ա,  
Ցամա՞ն, էրվում հմ:  
Լուսնակ զիշեր հով կանի,  
Իմ քոնը ո՞նց կտանի,  
Ցամա՞ն, էրվում հմ:  
Բաղումս վարդ եմ ցանել,  
Քեզ համար զարդ եմ արել,  
Ցամա՞ն, էրվում հմ:  
Լուսնակի շողին նայիմ,  
Ցարիս կարոտ կքաշեմ,  
Ցամա՞ն, էրվում հմ:  
Կանալ արոն արոտ ա,  
Սիրտս էրված յարոտ ա,  
Ցամա՞ն, էրվում հմ:

#### 83. ՍԻՊՏԱԿ ԴՈՎԾ

Սպիտակ դովչ մատաղ կանեմ,  
Աղջի շան, քեզ դռնաղ կանեմ,

Քարելի դու ինձ մի «շան» ասա,  
Թե չէ աշխարին ավեր կանեմ:  
Սեկի աշեր, սեկի աշեր,  
Տոննըս քանդիք կամար ունքեր:  
Այլ որ մեզի կրամբան,  
Թող սաղ տարին հիվանդանա:  
Քամին եկավ, յանա, յանա,  
Քամին տա բռ դոշը բանա,  
Սեկ-աշեր, սեկ աշեր,  
Տոննըս քանդիք կամար ունքեր:

#### 84. Ա.Դ.Ի ԹԵՂԻ

Աղջի թեղի դուս մի էնի, կսենաս,  
Բոյց կարճ ա, լոթու խարշ ա, կսենաս:  
Մալուլ, մալուլ ման ևս գալի մալլեթը,  
Կվախենամ քեզ փախցնեն գաղեթը:  
Աղջի, թեղի դուս մի էնի, կսենաս,  
Բոյց կարճ ա, լոթու խարշ ա, կսենաս:  
Աղջի թեղի արեն առավ սարի տակ,  
Քեզ մեննեմ, սերդ անուշ ա զի տակ:  
Աղջի թեղի ընչի կերար կաթի տակ,  
Ուրիշին առար, ինձի թողիք դարդի տակ:  
Մալուլ, մալուլ ման ևս գալի մալլեթը,  
Վախենում ևմ քեզ փախցնեն գլաղեթը:

#### 85. ՏԻԿ-ՏԻԿ

Ա՛խ, տիկ, տիկ, վա՛խ տիկ, տիկ,  
Զա՞ն տիկ, տիկ, տկնոր,  
Առանցի քեզի, հալ չոնիմ մի օր:  
Չեռքս ևս կառնեմ գինու տկնորը,  
Լցնեմ բակալը, լցնեմ իմ փորը,  
Ա՛խ, տիկ, տիկ, շան տիկ, տիկ  
Վա՞խ, տիկ, տիկ, տկնոր,  
Առանցի քեզի կյանք չոնիմ մի օր:  
Երազում տիսա պատկեր տիկ, տիկ,  
Կարծեցի կյանքում ևս իմ երջանիկ,  
Բաժակում տիսա քու լոս պատկերը,  
Կարծեցի ևս իմ աշխարքի տերը:  
—Ա՛խ, տիկ, տիկ...  
Գարրիկը որ զա, թի գոփս առնի,  
Ամոթ է, ամոթ, հարբած շտեսնի:  
Ա՛խ տիկ, տիկ, զա՞ն տիկ, տիկ,  
Վա՞խ, տիկ, տիկ, տկնոր,  
Առանցի քեզի խավար է իմ օր:

#### 86. ԶԵՐ ԲԱՂԻ ԴՈՒՌԻ

Զեր բաղի դուը բաց ա,  
Ուներդ շաղով թաց ա,  
Ինձանից հեռացել ես,  
Աչքերս լիքը լաց ա:  
Ղուշ մի դառնա թեավոր,

Դու խաղ կանչի ձիավոր,  
Էրնեկ կտամ էն օրին,  
Որ գաս մեր տուն թագավոր:  
Ուսկի մատնիք մատներիդ,  
Շողերն ընկան էրեսիդ,  
Աքլոր շուտով մի կանչի,  
Անքուն կանես իմ յարին:

#### 87. ԳՅՈՒԽԻ ԶԱՆ

Գյուփի շա՞ն, ֆայտոն զանիթ կանեմ,  
Քեզ երևան, թիֆլիզ, թաքու տանեմ,  
Յանա՞ն, յանա՞ն, էտ բախտի բան ա:  
Ալ բլուզ կարեմ, շալ բլուզ կարեմ,  
Քեզի մեռնեմ վրեն սաղափ շարեմ:  
Գյուփի շա՞ն, շատ մի ցանի բամբակ,  
Կերթամ, թիֆլիզ վրեղ կուտամ զանզատ:  
Յանա՞ն, յանա՞ն, էտ էլ բախտի բան ա:

#### 88. ԽՆՁ ՈՒՆԵՐ

Խ՞նձ ուներ յարին,  
Տուն չոներ յարին,  
Ոտդ դիր քարին,  
Առ սիրահարին:  
Շորորան աղջիկ,  
Օրորան աղջիկ,  
Քո գելքեն կարճ ա,  
Էնկ տղի խարչ ա:  
Իմ շինար յարին,  
Մեկ ու ճար յարին,  
Ոտդ դիր քարին  
Առ սիրահարին:

#### 89. Ա.Դ.Ի ԶԱՆ

Ոտդ դրել ևս թմրին,  
Աղջի շա՞ն,  
Յար արի,  
Ախսեր, մեռնեմ քու խմրին,  
Աղջի շա՞ն,  
Յար արի:  
Գնա, արի թող արա,  
Թաղան տղին գյող արա,  
Ախսեր, հանաքիդ մեռնեմ,  
Աղջի շա՞ն,  
Յար արի':  
Զերիդ դանակին մեռնեմ,  
Աղջի շա՞ն,  
Յար արի:  
Գնա արի թող արա,  
Լոթի տղին գյող արա,  
Հանդից ծաղիկ քաղեցի,  
Աղջի շա՞ն,

Ճար արի,  
 Լոթի տղին դաղեցի,  
 Աղջի ջա՞ն,  
 Ճար արի:  
 90. ԳՆԱՑԵԼ ԵՍ, ԵԿԵԼ ԵՍ  
 Գնացել ես, էկել ես  
 Հայկանուշ,  
 Ուզում բոյդ քոքել ես  
 Սիրանուշ,  
 Արմադրաղի  
 Զուխտ քոլիկը  
 էլան էր, թելան էր,  
 Խաթոնարիկ  
 Զուխտ աղջիկը  
 Մարալ էր, չելրան էր,  
 Գնա արի մոտիդ եմ,  
 Հայկանուշ,  
 Ոսկի քյամար գոտիդ եմ,  
 Սիրանուշ,  
 Արմադրաղի  
 Զուխտ քոլիկը  
 էլան էր, թելան էր,  
 Խաթոնարիկ  
 Զուխտ աղջիկը  
 Մարալ ու չելրան էր:

91. ԱՊԱՐԱՆԸ ՄՈՏԻԿ Ա.  
 Ապարանը մոտիկ ա,  
 Իմ յարը խորոտիկ ա,  
 Ի՞նչ անմ խորոտիկ ա,  
 Բոյդից կոլատիկ ա:  
 Ամպել ա, թռն չի գալի,  
 Անձրև ա, տռն չի գալի,  
 Ղարիբի օրը սկ ա,  
 Աշերը քոմ չի գալի:  
 Չինար ես, բոյդ մեռնեմ,  
 Լավ յար ես, սոլիդ մեռնեմ,  
 Չընի թե հեռանում ես,  
 Խոստումդ մոռանում ես:

## 92. ԱՂՋԻ ԶԱՆ

Արև շելած դու լուս ես,  
 Վարդանցի նոր բուս ես,  
 Աշխարքումս գովական,  
 Դուն իմ յարն ես սիրական,  
 Աղջի ջա՞ն:  
 Արի մի վառի ինձի,  
 Սրտով սիրում եմ քեզի,  
 Սիրած տղիդ խեղճ արի,  
 Աղջի ջա՞ն...

93. ԲՈՒԽԱՆ ՑԱՄԱՆ  
 Բուխան յաման, ուզ օլդի  
 Շաքար ու ջան սուզ օլդի:  
 Զեր դռեիցը աշել եմ,  
 Զահել չանս մաշել եմ,  
 Արի՛, արի՛, չան տղա,  
 Քու կարոտը քաշել եմ:  
 Էսօր բաղն ես գնացել,  
 Սապը ջրով լվացվել,  
 Արի՛, արի՛, չան աղջիկ,  
 Քու ճամփիդ եմ մնացել:  
 Բուխան յաման ուզ օլդի...

## 94. ԱՌ ԱՆՈՒԾ

Այսօր ախպուրն ես գնացել,  
 Աշքս ճամփիդ ա մնացել,  
 ԱՌի, Անուշ,  
 Ջա՞ն, Անուշ,  
 Իմ աննման  
 Հայկանուշ:  
 Ախպորհակին կռնիլ ես,  
 Ախպորի թասը բռնել ես,  
 ԱՌի, Անուշ,  
 Ջա՞ն, Անուշ,  
 Իմ աննման  
 Հայկանուշ:  
 Զուկալ ախպուր, արծաթ թաս,  
 Թասը լցնես ինձի տաս,  
 ԱՌի, Անուշ,  
 Ջա՞ն, Անուշ,  
 Իմ աննման  
 Հայկանուշ:

## 95. ԱԽ, ԵԲԱՆԻ

ԱՌի երանի էն օրին,  
 Որ ես գտնեմ էն յարին,  
 Կյանքս նրան զու անհմ,  
 Մատաղ կընիմ էն յարին:  
 Էս իմ անբախտ օրիրին,  
 Ման եմ զալի շուրին,  
 Զեռքես թռավ Աղավնին,  
 Ինձ համար էր թանկազին:  
 Սար ու ձորիր անց կացա,  
 Յարըս ուր էր՝ լիմացա,  
 Սարիր, ձորիր ձեն ածեք,  
 Յարիս տեղը իմացեք:

## 96. ԱՊԱՐԱՆԸ ՔԱՐՈՅ Ա.

Ապարանը քարոյ էր,  
 Ճար լե՛, յար լե՛,

Քարի տակը արոտ էր,  
 Յար լե՛, յար լե՛:  
 Էս ա յոթը տարի ա,  
 Յար լե՛, յար լե՛,  
 Քորին ախաղոր կարոտ ա:  
 Ապարան զար ու փոս ա,  
 Յար լե՛, յար լե՛,  
 Հաղիտ լաստիկ բլուզ ա,  
 Յար լե՛, յար լե՛,  
 97. ԵՍ ՊՈԽՈՒԻՐ  
 Ես պուճուր, յարս պուճուր,  
 Արեիդ մեռնեմ,  
 Ո՞վ կտա մեղ հաց ու ջուր,  
 Բարեկ կառնեմ:  
 Արեիդ մեռնեմ,  
 Յար ջա՞ն,  
 Բարեկ կառնեմ,  
 Յար ջա՞ն,  
 Սիրել և՛ կառնեմ:  
 Կրակդ շաղ ևս արել,  
 Արեիդ մեռնեմ,  
 Ինձ բեղամաղ ևս արել,  
 Բարեկ կառնեմ:  
 Արեիդ մեռնեմ,  
 Յար ջա՞ն,  
 Բարեկ կառնեմ,  
 Յար ջա՞ն,  
 Սիրել և՛ կառնեմ:  
 Գնա՞ , գնա՞ , գալիս ևմ,  
 Արեիդ մեռնեմ,  
 Սիրս սրտիդ տալիս ևմ,  
 Բարեկ կառնեմ:  
 Արեիդ մեռնեմ,  
 Յար ջա՞ն:  
 98. ՅԱՅԼԻ

Իմանսա, որ ևմ հասել,  
 Ամա՞ն, ամա՞ն յարո ջան  
 Ճամփեկ, շատ ևմ սպասել,  
 Սկիկ-սիրուն Մարո ջան:  
 Հենց որ կպնի արել,  
 Ամա՞ն, ամա՞ն յարո ջան,  
 Քեզի զրկեմ բարել,  
 Սկիկ-մեկ Մարո ջան:  
 Մարի դոշին սեղ խոտը,  
 Ամա՞ն, ամա՞ն յարո ջան,  
 Քաշեմ յարի կարոտը,  
 Սկիկ-մեկ յարո ջան:  
 Սարլորը սարլով գնաց,  
 Ամա՞ն, ամա՞ն յարո ջան:

Իմ յարը խռով մնաց,  
 Սկիկ-սիրուն Մարո չան:  
 99. Ա՞Յ ԱՂՋԻ...  
 Պուճուր առուն ջուր կուզա,  
 Աղջիկ տղին դուր կուզա,  
 Ա՛յ աղջի,  
 Քու դարդիցը,  
 Ջա՞ն աղջի,  
 Քու սավդիցը,  
 Ջուրն ընկնեմ  
 Բալկոնիցը:  
 Բարակ առուն գալիս ա,  
 Աղջիկ նստել լալիս ա:  
 Ա՛յ աղջի,  
 Քու դարդիցը,  
 Ջա՞ն աղջի,  
 Քու սավդիցը,  
 Ջուրն ընկնեմ  
 Բալկոնիցը:  
 Մի՛ լար, մի՛ լար ա՛յ աղջիկ,  
 Հրես յարդ գալիս ա  
 Ա՛յ աղջի,  
 Քու դարդիցը,  
 Ջա՞ն աղջի,  
 Քու սավդիցը,  
 Ջուրն ընկնեմ  
 Բալկոնիցը:  
 100. Ա՞Յ ՍԵՎ ԱՄՊԵՐ  
 Այ սկ ամպեր, հեռացեք,  
 Իմ յարին ճամփա բացեք,  
 Յար յարի հետ խոսելիս,  
 Անկաշ զրեք իմացեք:  
 Սկ ամպերը պարզում չեն,  
 Սպիտակ այլուրը սազում չի,  
 Ցոթը տարի ալ հագնեմ,  
 Սիրսս սկ ա, սազում չի:  
 Զին ա զալի վերեկից,  
 Ջուր ա կաթում տերեկից,  
 Կարմիր օրս սկացավ,  
 Բերախտ յարի էրեսից:  
 Կայնել ևս կած կմանես,  
 Արեցակին նման ևս,  
 Վեր կաց մոտից գնա,  
 Ինձի ինելից կհանես:  
 101. ՅԱՐ ԳՅՈՒՆԱ.  
 Յար գյուշա...  
 Յարս կայնել ա շոշին,

Ճա՞ն, յարո չան,  
Մեղաները դոշին:  
Յար գլուշա...  
Էրթանք մեր կալերը,  
Դուխի շաղ տամ,  
Պենջակիդ ծալերը:  
Յար գլուշա...  
Պարախողը զնաց,  
Ճա՞ն, յարո չան,  
Յարիս բարեր մնաց:

### 102. ԱՂՎԵՍ ՊԱՌԿԵՑ

Աղվեսը պակից աղբի տակին,  
Վո՞ւ, վո՞ւ,  
Աշբը գցեց հավի ձագին,  
Վո՞ւ, վո՞ւ,  
Նետով կտամ աչքի տակին,  
Վո՞ւ, վո՞ւ,  
Որ մոտ չփա նա մեր բակին,  
Վո՞ւ, վո՞ւ:  
Աղքի՛, արի, հորթին չուր տուր,  
Վո՞ւ, վո՞ւ,  
Քեզ կպատվիմ մեղր ու կարագ,  
Վո՞ւ, վո՞ւ,  
Համ տիրացու, համ սարկավագ,  
Վո՞ւ, վո՞ւ,  
Ոտներ ունեն հավաք-մավաք,  
Վո՞ւ, վո՞ւ:  
Կատոն սատկից, ափսոս ու վախ,  
Վո՞ւ, վո՞ւ,  
Մկներն էսօն շատ են ուրախ,  
Վո՞ւ, վո՞ւ,  
Մին էլ տեղից հենց վեր կացավ,  
Վո՞ւ, վո՞ւ,  
Մկանց կանի թողաթաթախ,  
Վո՞ւ, վո՞ւ,

### 103. ԱԾԵՑԵՔ ԹԱՌԻԲ...

Ի՞նչ եք մտածում,  
Ոսկի եք դիզում,  
Էս լին աշխարքում,  
Ի՞նչ եք երազում:  
Ածեցեք թառը,  
Մորթեցեք զառը,  
Գինու տակառը,  
Շատ լավ բան է:  
Ի՞նչ եք շատ քնում,  
Շուտ շեք վեր կենում,  
Երկար քնելուց  
Ի՞նչ եք հաւանում:

Քեֆը լավ բան է,  
Բոլորի համար,  
Աշխարքում հավասար:  
Ածեցեք թառը,  
Մորթեցեք զառը  
Գինու տակառը,  
Շատ լավ բան է:

### 104. ՅԱՄԱՆ, ՅԱՄԱՆ

Յամա՞ն, յամա՞ն, վառա ես,  
Քեզի տեսա դառա ես:  
Ֆայտոն նստել ման կուզաս,  
Յամա՞ն, յամա՞ն, վառա ես,  
Խալին զցեմ յան կուզաս  
Քեզի տեսա դառա ես:  
Գութանս քարին առավ,  
Յամա՞ն, յամա՞ն, վառա ես,  
Յարս զնաց շղառավ,  
Քեզի տեսա դառա ես:  
Էլնեմ սրեմ մանզաղը,  
Յամա՞ն, յամա՞ն, վառա ես,  
Էրթանք մեր սարի բաղը,  
Քեզի տեսա վառա ես:

### 105. ԼՂՆԵՆՔ ՍԱՐԸ

Լղնենք սարը,  
Բոնենք՝ բոլորի պարը,  
Սարե՛ր, եդ զնացեք,  
Տեսնեմ իմ յարը:  
Բամբակ եմ ցանել՝ զող ա,  
Լղնենք սարը,  
Բոնենք՝ բոլորի պարը,  
Յար եմ ճարել թաղա ա,  
Սարե՛ր, դեն զնացեք,  
Տեսնեմ իմ յարը:  
Արտ եմ ցանել ալա յա,  
Լղնենք սարը,  
Բոնենք՝ բոլորի պարը,  
Յարս թուրքի բալա յա,  
Սարե՛ր, դեն զնացեք,  
Տեսնեմ իմ յարը:

### 106. ԱՐԻ ՔԱՂԵՆՔ

Ի՞նչ բան ունես դարդի հետ,  
Դարդ ունեցող մարդի հետ,  
Արի քաղենք սիրուն վարդ,  
Ամոթ չի, որ անենք դարդ:  
Էդ քու լուսակ պատկերը,  
Կեռ ու կամար ոմեքերը,

Ինձ իսկըամաղ արել են,  
Խելքս զիխս տարել են:  
Արի բաղենք սիրուն վարդ,  
Ամոթ չի, որ անենք դարդ:

#### 107. ՔԵԼԵ ՅՈՐ ԶԱՆ

Քելե, յար շան, քելե՛,  
Մեր բաղի դոշը,  
Մեղրել եմ կարպը  
Փաթթել եմ լոշը:  
Կանչում եմ՝ արի՛,  
Կանչում եմ՝ արի՛,  
Մոտա ման արի:  
Քելե, յար շան, քելե՛,  
Երթանք մեր կալը,  
Ինչ սիրուն ա, յամա՞ն,  
Երեսիդ խալը:  
Կանչում եմ՝ արի՛,  
Կանչում եմ՝ արի՛,  
Օրն էլալ տարի:

#### 108. ՄՏՍ. ԷՍ ՏՈՒՆ

Մտա էս տուն, մտա էն տունը՝  
Մուխ էր,  
Բոյդ զարդու զամիշ,  
Անքերդ թուխ էր:  
Ես ու յարս շահել ենք,  
Մտա էս տուն, մտա էն տունը՝  
Մուխ էր,  
Ուխտ ու պայման արել եմ,  
Բոյդ զարդու զամիշ,  
Ոնքերդ թուխ էր:  
Ես ու յարս մալական,  
Մտա էս տուն, մտա էն տունը՝  
Մուխ էր,

#### 109. ՄԵՐ ԲԱՄԲԱԿԸ

Մեր բամբակը, ձեր բամբակը,  
Քալա էր, քալա էր,  
Յար բռնելը, յար թողնելը,  
Խաթա ու բալա էր:  
Խաթունարխցիք շախով են,  
Մեր բամբակը, ձեր բամբակը,  
Քալա էր, քալա էր,  
Սոխ ու բիբար ծախող են,  
Յար բռնելը, յար թողնելը,  
Խաթա ու բալա էր:

Ա՛յ ասում ա, ասում ա,  
Մեր բամբակը, ձեր բամբակը,  
Քալա էր, քալա էր,  
Կարմիր գինին թասում ա,  
Ճար բռնելը, յար թողնելը,  
Խաթա ու բալա էր:  
Կարմիր գինին թափեցինք,  
Խաթունարխցոնց խաթեցինք:

#### 110. ԿԱՆԱԶ ՈՒ ԿԱՐՄԻՐ

Կանալ ու կարմիր տերելը, տերելը,  
Էրթանք սարի վերելը, վերելը,  
Դուշը թուալ էն սարից,  
Կանալ ու կարմիր տերելը, տերելը,  
Խարար բերեք իմ յարից:  
Բալիք նամակ զրել տամ,  
Կանալ ու կարմիր տերելը, տերելը,  
Էգվան ճամփեմ իմ յարին,  
Երթանք մեր սարի վերելը, վերելը:

#### 111. ԷՍ ԷԼ ԿՈՇԱ ՊԱՅԴԵՆ Ա.

Թոյե՛ք, թող թողը ընի,  
Էս էլ Կոշա զայդեն ա,  
Դուշմանի գուղը ընի,  
Կոշա տղի սավդեն ա:  
Ալզի, արի մեր բաղը,  
Էս էլ Կոշա զայդեն ա,  
Շախով կանչենք են հաղը,  
Կոշա տղի սավդեն ա:  
Ալզի էրթանք մեզ քախան,  
Էս էլ Կոշա զայդեն ա,  
Էրեսդ զյունաբախան,  
Կոշա տղի սավդեն ա:

#### 112. ԹԵԼՈ

Աման թելո՛,  
Թելո՛ շան, թելո՛,  
Շիրին թելո՛,  
Թելո՛ շան, թելո՛:  
Ի՞նչ տնկի ես,  
Բար չունես, թելո՛,  
Ի՞նչ շահել ես,  
Յար շննես թելո՛,  
Լուսակ պատին  
Առել ա, թելո՛,  
Սերդ ինձի  
Վառել ա, թելո՛,  
Ամա՞ն թելո՛,  
Թելո՛ շան, թելո՛,  
Սիրուն թելո՛,  
Թելո՛ շան, թելո՛:

113. ԷՆ ԳՅՈԶԱԼԸ

էն չելրանը,  
էն մարալը,  
էն գյոզալը,  
Բաղումն ա:  
նազերդ,  
Մազերդ,  
ինձ էրում ա,  
Քո սերը:  
Թաղլան եմ, թթի դուշ եմ,  
էն չելրանը,  
էն մարալը,  
էն գյոզալը  
Բաղումն ա:  
Քեզի համար անուշ եմ,  
Մազերդ,  
նազերդ,  
ինձի էրում ա,  
Քո սերդ:

114. ՄԱՅՐԻԿ ԶԱՆ

Մայրիկ ջան, ջուրն ընկնեմ,  
Քույրիկ ջան, Քուռն ընկնեմ,  
Շեկ յարի դարդիցը:  
Գու հանգը զնացիր,  
Ես տունը մնացի,  
Խաս բաղի վարդերն  
Մի փոնջ կապեցի:  
Մայրիկ ջան, ջուրն ընկնեմ,  
Քույրիկ ջան, Քուռն ընկնեմ,  
Շեկ յարի դարդիցը:  
Հանդեն դառա տոննը  
Քեզի շգտա,  
Ա՛խ ու վաշի անելով  
Խաս բաղին մտա:  
Մայրիկ ջան, ջուրն ընկնեմ,  
Քույրիկ ջան, Քուռն ընկնեմ,  
Շեկ յարի դարդիցը:

115. ԱՌ ՍԻՐՈՒՆ

Ա՛յ սիրում, ա՛յ սիրու,  
Կողպեցի Մարան,  
Դափին տվին, զուռնին տվին,  
Կեսրանց տուն տարան:  
Ման եմ գալի, յանա-յանա,  
Ա՛յ սիրու Մարան,  
Ցարիս տեղը ով կիմանա,  
Կեսրանց տուն տարան:  
Ա՛յ սիրու, ա՛յ սիրու,

Կողպեցի Մարան,  
Դափին տվին, զուռնին տվին,  
Կեսրանց տուն տարան:

116. ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

(Կատակերգ ու պար)

Մարդը—Ա՛յ կնիկ, էլար,  
Օ՛ր հարսնիք էկար,  
Կովերն ի յարաբ,  
Նախիրն ի տարա՞ր...  
Կեֆկը—Նախրին կիզա,  
Կովերն ի տանա,  
Տանա ու տանա,  
Տանա ու տանա:  
Մարդը—Կնիկ, սուս էլի,  
հաղեն դուս էլի  
Քիլմ առեջ արի,  
Օխչարն ի՞նչ էրիր:  
Կեֆկը—Զոբանն ի էկի,  
Օխչարն ի տարի,  
Տարի ու տարի,  
Տարի ու կերի:

Մարդը—Օր էլար վազար  
էդ ուրախ հարսնիք,  
Ճտերն ի՞նչ էրիր,  
Ըստ, ա՛յ կնիկ:  
Կեֆկը—Ռուուրն ի էկավ,  
Ճտերն ի տարավ  
Տարավ ու տարավ  
Տարավ ու կերավ:

Մարդը—Կա՛յ կնիկ, բողաք  
Ճժերն ի մոռցա  
Օր հետգ ի շափի՝  
Ճժերն ի՞նչ էրիր:  
Կեֆկը—Ճժերն ի լացին,  
Լացին ու լացին,  
Լացին ու լացին,  
Տեղեստեղ մացին:  
Ես լի լացեցի,  
Արցունք թափեցի,  
Էկա խարսնատուն,  
Փշում խաղացի  
Սիրու ի բացեցի:

117. ԳՅԱՄԻՆ ՀԱՍԵ....

Գյամին հասավ ծովի կեսը,  
Խումար աղջիկ արի զիսը,  
Քեզ սիրել եմ տարու կես,  
Քեզ կպահեմ վարդի պիս:  
Ղամշե գտալ եղի միջ,

Դու մի խատ ես զեղի մեջ,  
Ի՞ն տունը լեն մեղան ա,  
Մի յար ունեմ շելրան ա:

### 118. ԶԻԹ ՄԻՆԻՑԱՆԵԴԻ

Չիթ մինթանեղ կարել ես,  
Գոշին սաղափ շարել ես,  
Էլ անոնս չես տալի,  
Չեղսի՛ յավը ճարել ես:  
Ջուրն բնկավ բարակ առուն,  
Աչքս մնաց քու զարոն,  
Շատը զնաց, քիչը մնաց,  
Համբերե հարի զարոն:

### 119. ԱԳՁԻ ՀԱԳԻՆԴԻ

Աղջի հագինդ չիթ ա,  
Քեզ կուզեմ՝ մերդ չի տա,  
Չի տալի, հել էլ շտա  
Խնձնից լավին հո չի տա:  
Ա՛խ իմ անուշիկ յար շան,  
Լեզուդ զանել ա մարշան:  
Աղջի, անունդ թամար,  
Աշրդ թուխ, ունքի համար,  
Կրիբեմ ոսկի բամար,  
Փու բարակ մեջքի համար  
Ախ, իմ անուշիկ յար շան:  
Լեզուդ զանել ա մարշան:

### 120. ԷՍ ԳԻՇԵՐ ԼՈՒԽՆԱԿ ԳԻՇԵՐ

Էս գիշեր լուսնակ գիշեր,  
Սև աշեր, կարմիր թշեր,  
Գոշդ զիմ արա հոյին,  
Քամին տա զոշիդ մովին:  
Առավոտ բարի լուսին,  
Յարս կերթար սափորն ուսին,  
Դեմ արա դոշդ հովին,  
Քամին տա դոշիդ մովին:  
Ալ ու արվան ծաղիկ ես,  
Ինձ համար աղումիկ ես:  
Դեմ արա դոշդ հովին,  
Քամին տա դոշիդ մովին:

### 121. ԱԼՊԵՐ ԶԱՆ

Շալ բուզդ կարել եմ,  
Ախափե՛ր շան,  
Կոճակները շարել եմ,  
Քեզ դուրբան:  
Բոլոր լուսնակ ես զառել,  
Ախափե՛ր շան,  
Վարդ, մանուշակ ես զառել,

Քեզ դուրբան:  
Սարի տակին արոտ ա,  
Ախափե՛ր շան,  
Քուրն ախափորը կարոտ ա,  
Քեզ դուրբան:

### 122. ԹՈՒԻ ԿՈՒՆԵՐԴԻ

Թուիս կոներդ կարմիր մարշան,  
Կարմիր մարշան, յար շան:  
Դու չոռ ասա,  
Ես կասեմ շան,  
Շարմաղ մատիդ  
Մատնիթ շարեմ,  
Խաս մինթանիդ  
Ալմաստ կարեմ:

### 123. ՎԱԽ, ՍԻՐՈՒՆԻԿԱՍ

Ատում էիր, սիրեցիր,  
Սիրում էիր, ատեցիր,  
Ինձ նման շահել տղին  
Դու անդանակ արեցիր:  
Վա՛խ, սիրունիկս,  
Էրվում եմ,  
Ա՛ման, ա՛ման, էրվում եմ:  
Էկ քո սիրով վառվում եմ:  
Վարդ ցանեցի, փուշ էլավ,  
Քյաֆուր յարի թուշ էլավ,  
Ջէ որ զրկած բարեդ,  
Շաքարից անուշ էլավ:

### Վա՛խ, սիրունիկս,

Էրվում եմ,  
Ա՛ման, ամա՞ն էրվում եմ,  
Էկ քո սիրով վառվում եմ:

### 124. ԱՐԵՎՈՒԻԴ ՄԵՌՆԵՐ

Քթկալը ճիտս եմ զցել,  
Արկուդ մեռնեմ,  
Շեկ յարը ճիտս եմ զցել,  
Բարեկ կառնեմ:  
Հասել եմ Ալազյազը,  
Արկուդ մեռնեմ,  
Հագել եմ ալ-ատլասը,  
Բարեկ կառնեմ:  
Ես ու յարս շահել ենք,  
Արկուդ մեռնեմ,  
Ուխտ ու պայման արել ենք,  
Բարեկ կառնեմ:  
Ես ու յարս մալական,  
Արկուդ մեռնեմ,  
Հլնենք, էրթանք թիրական,  
Բարեկ կառնեմ:

## 125. ԶԻՆ, ԶԻՆ

Չի՞ն, չի՞ն, չին բըլուզդ կարել եմ,  
Հոգուդ մեռնեմ, յախեղ սաղափ  
Կոճակները շարել եմ:  
Կոտորել եմ Արազի բուզը,  
Չի՞ն, չի՞ն, չին բըլուզդ կարել եմ,  
Թափ տամ քաքլովիդ թողը,  
Հոգուդ մեռնեմ, յախեղ սաղափ  
Կոճակները շարել եմ:  
Արազը բուզ ա բռնել,  
Չի՞ն, չի՞ն, չին բըլուզդ...  
Քաքլովիդ թող ա բռնել  
Հոգուդ մեռնեմ, յախեղ սաղափ  
Կոճակները շարել եմ:  
Արազը հշտացել ա,  
Չի՞ն, չի՞ն, չին բըլուզդ...  
Ծամփեղը կոշտացել ա,  
Հոգուդ մեռնեմ, յախեղ սաղափ  
Կոճակները շարել եմ:

## 126. ԵՐԻ, ԵՐԻ

Լուսնակը կեռ ու կամար,  
Երի, երի յանդրմ օ՛յ, օ՛յ,  
Նախուն գոտիկն ինձ համար  
Յանդրմ, շեկո ջան:  
Լուսնակ գիշեր, հով գիշեր,  
Երի, երի յանդրմ օ՛յ, օ՛յ,  
Աև աշեր, կարմիր թշեր,  
Յանդրմ, շեկո ջան:  
Գացինք հանդեր, բռնինք լոր,  
Երի, երի յանդրմ օ՛յ, օ՛յ,  
Աղջիկ տեսանք յալլի ձոր,  
Յանդրմ, շեկո ջան:  
Կանաչ բաղի բար ունեմ,  
Երի, երի յանդրմ օ՛յ, օ՛յ,  
Քեզնից լավիկ յար ունեմ,  
Յանդրմ, շեկո ջան:

## 127. ՕՍԱՆՆԱ

Օսաննա՛, երի, երի Օսաննա՛,  
Չինար բոյդ գովելի, քո յարն ա,  
Օսանի ձեռքի շալը Օսաննա՛,  
Արի, էրթանք մեր բաղը, Օսաննա՛,  
Օսաննա՛, երի, երի Օսաննա՛,  
Չինար բոյդ գովելի, քո յարն ա,  
Սարի տակովը գնաց, Օսաննա՛,  
Քու յարը խոռով մնաց, Օսաննա՛,  
Օսաննա՛, երի, երի Օսաննա՛,  
Չինար բոյդ գովելի, քո յարն ա,

Մատնիքդ մատովդ չի, Օսաննա՛,  
Մաշկիկդ ոտովդ չի, Օսաննա՛:  
Օսաննա՛, երի, երի Օսաննա՛,  
Չինար բոյդ գովելի, քո յարն ա:

## 128. ՄԱՐԱԼԻ ՊԵՍ

Մարալի պես ման ես գալի,  
Որսորդի ձեռից փախած ես,  
Ով քեզ աշե,  
Ա՛խ, կքաշե,  
Ա՛խ սիրուն աղունակ,  
Անուշախոս սոխակ,  
Երկնային արուայակ:  
Լե՛, լե՛, լե՛,  
Ա՛խ սիրուն աղունակ,  
Անուշախոս սոխակ:  
Լե՛, լե՛, լե՛,  
Կաքավի պես ձեն կհանես,  
Սիրոս քեզ հետ կտանես,  
Ով քեզ աշե,  
Ա՛խ, կքաշե,  
Ա՛խ սիրուն աղունակ,  
Անուշախոս սոխակ,  
Երկնային արուայակ:  
Լե՛, լե՛, լե՛:

## 129. ԶԱՆՈ ԶԱՆ

Ճակտիդ ոսկի կշարեմ,  
Ճանո ջան,  
Մախմուս գելրա կկարեմ,  
Ճանո ջան,  
Ասա՛ հա՛,  
Ասա՛ հա՛,  
Ճանո ջան,  
Իմը գուն ես,  
Էլ ի՞նչ կոզիս,  
Ճանո ջան:

## 130. ԱՍԿՅԱՐ ՈՒ ՍԵՅՐԱՆ

Ասկյար ու սեյրան ու յար,  
Մարալ ու ջեյրան ու յար:  
Ոլխարը հանդեն հանեմ,  
Ասկյար ու սեյրան ու յար,  
Խաղ կանչելով տուն տանեմ,  
Մարալ ու ջեյրան ու յար:  
Գութանը վարի՛, վարի՛,  
Ասկյար ու սեյրան ու յար,  
Իրիկոմը տուն արի,  
Մարալ ու ջեյրան ու յար:  
Բարդու ծառը բանցը ա,

Ասկար ու սելրան ու յար,  
Հոռովիդ քաղցր ա,  
Մարալ ու շելրան ու յար:

### 131. ՀԱՆԱՔՆԵՐ

Երբ՛ըփ, թրբ՛ըփ մազապին,  
Երբ՛ըփ, թրբ՛ըփ մազապին,  
Տաւորս շահին, արասին,  
Մախեց տվեց բողազին,  
Էլ ի՞նչ մնաց Հայկապին:  
Աղեն մածուն մերել ա,  
Փեսի փալը պահել ա,  
Անտեր մնար շալ կատուն,  
Կերալ փեսի փալ մածուն:  
Երբ՛ըփ, թրբ՛ըփ մազապին,  
Տաւորս շահին, արասին  
Մախեց տվեց բողազին,  
Էլ ի՞նչ մնաց Հայկապին:  
Թավեն ծակ ա, եղ չկա,  
Թազա փեսին տեղ չկա,  
Փեսին շատ էրես մի տա,  
Փեսին էլթիբար չկա:

Երբ՛ըփ, թրբ՛ըփ մազապին,  
Տաւորս շահին, արասին,  
Էլ ի՞նչ մնաց Հայկապին:  
Մախեց տվեց բողազին:  
Քավոր աղեն խարել ա,  
Մեր թամադեն հարբել ա,  
Գինին բեղին թափել ա,  
Գինին գալով կոնծել ա,  
Գինու գավը կործել ա:  
Երբ՛ըփ, թրբ՛ըփ մազապին,  
Տաւորս շահին, արասին,  
Էլ ի՞նչ մնաց Հայկապին:  
Մախեց տվեց բողազին:

### 132. ՔԱ. ԿԱՅԻ

Մածուն կուրիմ՝ թան կրերես,  
Քա՛ կնիկ,  
Քո խոր խերն անիծած,  
Ալբոր մաղով ցան կրերես,  
Քա՛ կնիկ,  
Քո խոր խերն անիծած,  
Գեշ կնիկ,  
Քու զետինը մտնես,  
Ղայդով կնկան հելրան ըլնես:  
Սուռ ոտներիդ մաշիկ կուզես,  
Քա՛ կնիկ,  
Քո խոր հերն անիծած,  
Սուռ մատներիդ մատնիք կուզես,

Քա՛ կնիկ,  
Քու խոր խերն անիծած:  
Գեշ կնիկ,  
Քու զետինը մտնես,  
Ղայդով կնկան հելրան ըլնես,  
Ղայդով կնկան հելրան ըլնես:

### 133. ՀԱՄ ԴՈՒ ՎԱՌԱՐ

Կարմիր վարդի փուշ էլա,  
Կապուտ զարդի թուշ էլա,  
Համ զու վառա՛ր  
Համ զու վառար,  
Յարո չան,  
Համ ինձ չառար,  
Զան չան,  
Համ ինձ չառար:  
Հանդեն էկա, տոն մտա,  
Յարիս տանը շգտա,  
Համ ես վառա,  
Յարո չան,  
Համ քեզ չառա,  
Զանեշան,  
Համ քեզ չառա:

### 134. ԱՊ.ՉԻ ՄԱՐԱՆ

Աղջի մարան,  
Հարսնիթ ես զնացել,  
Տոլմա չկա,  
Սոված ես մնացել,  
Բա չեք ասի,  
Մարսնը էկել ա,  
Հարսի շորեր  
Կարել ա, հաքել ա:  
Աղջի Մարան,  
Համամ ես զնացել,  
Տաք ջուր չկա,  
Կեղտոտ ես մնացել:  
Բա չեք ասի,  
Մարանին տարել ենք,  
Դուշմանի,  
Աչքերը հանել ենք:

### 135. ՍԱ.ԹՈՅԻ ԵՐԿԱԾ

Ես Սաթոն եմ էվշիլարցի,  
Ոլ բարով բոստան պահեցի,  
Անմեղ տեղը ըսպանվեցի,  
Զովո՞մ էր, մալրիկ, զովո՞մ էր:  
Գյումարախանը տալդա էր,  
Բոստան պահելը սավա էր,

Ռովելը «Ամերիկա» էր,  
Զովում էր, մայրիկ, զովում էր:  
Ենք ապեր աստված սիրես,  
Երեվանա բժիշկ բիրես,  
Իմ ցավերը մեկ-մեկ զրես,  
Զովում էր, մայրիկ, զովում էր:

### 136. ԵՍ ԱՂԵԿՆ ԵՄ

Ես եղեկն եմ չամպեցի,  
Մեկ ջիվան,  
Խանում եվա ջան, ջան,  
Տանից հանին տարան չուրի երևան,  
Խանում եվա ջան, ջան,  
Ես կերթամ լալով,  
Լալով, ողբալով:  
Արի էրթանք քո մանգալած արտերը,  
Խանում եվա ջան, ջան:  
Դու կեցիր բարով,  
Ես կերթամ լալով:

### 137. ԱՇԽԵՆ ԶԱՆ

Աշխենը նստած էր,  
Օթախը կա կաներ,  
Մուկուչի դարդերը,  
Մրտին դադ կաներ,  
Օ՛յ, օ՛յ, օ՛յ,  
Օ՛յ օ՛յ, Աշխեն  
Զան, օ՛յ, օ՛յ:  
Կանչ հովիվ, կանչ,  
Սարերն արոտ ա,  
Դարդի զարբաթ ընկած,  
Միրտս յարոտ ա,  
Օ՛յ, օ՛յ, օ՛յ, օ՛յ,  
Օ՛յ, օ՛յ, Աշխեն զան, օ՛յ, օ՛յ:

### 138. ՔԱ. ՏՊԱ. ՔՅԱՄԱՐԻՒԹ

Քա տղա, քյամարիդ գոբակը ոլորի,  
Ինձի տեսար, սիրտ փորիդ մոլորի:  
Գղակդ ծուռն ես զրել,  
Քա տղա, քյամարիդ գոբակը ոլորի,  
Աշքդ մեր գուռն ես զրել,  
Ինձի տեսար, սիրտ փորիդ մոլորի:

### 139. ԼՈՒՅ, ԼՈՒՅ

Լա՛յ, լա՛յ, էդ քո բոլին մեռնեմ,  
Շատ սիրուն ես՝ սոյիդ մեռնեմ,  
Սիրել եմ սիրով սալդով,

Լայ-լա՛յ, ես քո ջանին մեռնեմ:  
Ալամ աշխարքի դայդով,  
Ես քո բերող նանին մեռնեմ,  
Լայ-լա՛յ, ես քո ջանին մեռնեմ,  
Շատ սիրուն ես՝ սոյիդ մեռնեմ:

### 140. ԼՈՒՅ, ԼՈՒՅ, ՍՈՅԾԻԿ

Օլոր, մոլոր ծուռ ճամփեռով էկա ես,  
Քո նշանը իրա տեղը գտա ես,  
Լա՛յ, լա՛յ, լա՛յ,  
Լա՛յ, լա՛յ, Սոֆիկ լա՛յ, լա՛յ,  
Լա՛յ, լա՛յ սիրուն լա՛յ, լա՛յ:  
Շալ մինթանեղ խաս թելերով կարել եմ,  
Սարաֆ կոճակ դոշիդ վրեն շարել եմ,  
Լա՛յ, լա՛յ, լա՛յ, լա՛յ,  
Լա՛յ, լա՛յ, Սոֆիկ լա՛յ, լա՛յ,  
Լա՛յ, լա՛յ սիրուն լա՛յ, լա՛յ:

### 141. ԿԱՅՆԻ, ԿԱՅՆԻ

Կայնի, կայնի գալիս եմ,  
Ճար, յաման, նանի ջան,  
Մափ տալիս եմ, լալիս եմ,  
Ճար, յաման, նանի ջան:  
Կայնել ես կալատեղում,  
Ճար, յաման, նանի ջան,  
Մի հատ ես մեր էս գեղում,  
Ճար, յաման, նանի ջան,

### 142. ՎԱՐԴԻ ԹՈՒՓԸ

Վարդի թուփը շատ ցածր ա,  
Դե՛, սիրուն յար ջան, ե՛կ,  
Դե՛, սիրուն յար ջան ե՛կ,  
Սիրած յարը շատ քաղցր ա,  
Ե՛կ, կարոտս առնեմ:  
Բաղումս ոռնեմ յոթ բաղվանչի,  
Դե՛, սիրուն յար ջան, ե՛կ,  
Թութակն ածի ու խաղ կանչի,  
Ե՛կ, կարոտս առնեմ:

### 143. ԷՐԹԱՄ ՆԱՆԻՍ...

Էրթամ նանիս տեսնեմ ու զամ,  
Խաս մինթանես հազնեմ ու զամ:  
Վա՛յ տո՞ւյ, տո՞ւյ,  
Տո՞ւյ, տո՞ւյ,  
Տո՞ւյ, տո՞ւյ,  
Ջա՞ն, տո՞ւյ, տո՞ւյ,  
Տո՞ւյ, տո՞ւյ,  
Տո՞ւյ, տո՞ւյ...  
Էրթամ նանիս ասեմ ու զամ,  
Զառ մաշիկս հազնեմ ու զամ:  
Վա՛յ, տո՞ւյ, տո՞ւյ...

144. ԱՐԱՋՆ ԱՆՑԱ

Արագն անցա, հեռացա,  
իմ աշխարքից վերացա,  
Յոթը տարի մնացի,  
Եկի քնզ շմուացա:  
Արագի ջուրը վարար,  
Ռոշք քեզի հետ տարար,  
Չե որ ասիր, շուտ կղամ,  
Թռ խոսքին տեր չղանար:  
Նանս լա՞-լա՞ էր ասում,  
Անուշ բոնս էր տանում,  
Իմ յարը զարիք ընկած,  
Իմ բոնը ո՞նց էր տանում:

145. ԿԱՐՄԻՐ ՄԱՐԶԱՆ

Կարմիր մարշան ախակը շան,  
Դիլի՛, դիլի՛, Դիլիշան,  
Ոսկի ֆինշան ախակը շան,  
Դիլի՛, դիլի՛, Դիլիշան:  
Խուճում զառ ևս ախակը շան,  
Դիլի՛, դիլի՛, Դիլիշան,  
Վարդի ծառ ևս ախակը շան,  
Դիլի՛, դիլի՛, Դիլիշան:  
Մեղքի ծոր ևս ախակը շան,  
Դիլի՛, դիլի՛, Դիլիշան,  
Աւ խնձոր ևս ախակը շան,  
Դիլի՛, դիլի՛, Դիլիշան:

146. ԲՈՒ ԼԵՅԼԻ

Մկներն առիք են քանդում,  
Բու լեյլի,  
Հարսները տոն շեն մտնում,  
Բու լեյլի,  
Էսօր օրը շարաթ ա,  
Բու լեյլի,  
Յար նողուլ-նարաթ ա,  
Բու լեյլի:

147. ԻՄԱՅԵԼ ԵՄ

Իմացել եմ նշանլու ևս,  
Շեկիկ յարո շան,  
Աշխարքում իմը դու ևս,  
Աղիղ Մարո շան:  
Վարդը թփիցը քաղում ևս,  
Շեկիկ յարո շան,  
Խնձորը թաքում ժիծում ևս,  
Աղիղ Մարո շան:

148. ՇԱՔԱՐ-ՇԱՐԲԱԹՈՎ

Շաքար-շարբաթով,  
Անուշ շան,  
Նողուլ-նարաթով,  
Քեզ դուրսան,  
Քուրիկիս տարան,  
Անուշ շան,  
Սազ ու սոլքաթով  
Քեզ դուրսան:

149. ՔԱՂՋԱՆ

Քաղջան կանեմ ևս հողին,  
Նանա՞լ, նանա՞լ, նանա՞լ,  
Մեռնեմ վլավ բերողին,  
Գյուկում, նանա՞լ, նանա՞լ:  
Թաքուզակիս կեռ կոթը,  
Նանա՞լ, նանա՞լ, նանա՞լ,  
Հրես եկավ կորկոտը,  
Գյուկում, նանա՞լ, նանա՞լ:  
Թաքուզակիս դլավը,  
Նանա՞լ, նանա՞լ, նանա՞լ,  
Հրես եկավ փլավը,  
Գյուկում, նանա՞լ, նանա՞լ:

150. ՍԻՐՈՒՆ ՍՈՆԱ

Ինձի համար դարդ մի արա,  
Սիրուն Սոնա,  
Ես քո նազը, ոսկի սազը  
Զեմ մոռանա,  
Քեզի տեսա բարի լուսին,  
Սիրուն Սոնա,  
Կնմանիս բոլոր լուսին,  
Սիրուն Սոնա:

151. ՀՈ ՅԱՄԱՆ

Կաքավ ա կայնե քարին,  
Հո՞, յաման,  
Հո՞ յար շան:  
Կոկում, կանչում յարին,  
Զէ, յաման,  
Օ՞, մարշան (2):  
Երկնքով անցավ դազը  
Հո՞, յաման,  
Հո՞ յար շան:  
Ուստեն շալեց իր սազը  
Զէ՞ յաման,  
Հո՞, մարշան:

152. ԱՐԵՎԱՆ ԱՌԵ

Արեն առավ սարերովն,  
Կաքավ թառավ քարերովն,

Առել են, վո՞ւ, վո՞ւ,  
 Վո՞ւ, վո՞ւ, վո՞ւ,  
 Տարել են, վո՞ւ, վո՞ւ  
 Վո՞ւ, վո՞ւ, վո՞ւ  
 Լորիկ յարս տարել են,  
 Իմ ձեռքիցը առել են,  
 Աստված սիրեք, ճար արեք,  
 Սիրսս կրակով վառել են:  
 Առել են, տարել են,  
 Սիրսս կրակով վառել են:

### 153. ԱԶՔՍ ՄՆԱՑ

Աշս մնաց  
 Էդ քու ճամփին,  
 Դուն չեկար, (2)  
 Յարաբ աստված,  
 Չեղնի ինձի մոոցար,  
 Ամա՞ն,  
 Մոոացար, ամա՞ն,  
 Արի, ամա՞ն, արի՛,  
 Իմ սիրելիս, արի՛:  
 Սարելն ընկե,  
 Էլ տուն չի գա,  
 Իմ յարը, (2)  
 Յարաբ, աստված,  
 Էլ ո՞նց կեղնի  
 Իմ ճարը, ամա՞ն,  
 Իմ ճարը, ամա՞ն,  
 Արի, աման, արի՛,  
 Իմ սիրելիս, արի՛:

### 154. ԱԼ ՋԻՆ ՀԵԾԱԾ

Ալ ձին հեծած զալիս ես,  
 Ա՛յ հանզարա, հանզարա,  
 Քաղցր բարկ տալիս ես,  
 Շահին տվի տանձ առա:  
 Մող ես, ավազիդ մեռնեմ,  
 Ա՛յ հանզարա, հանզարա,

### 155. ԶՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Անուշ զարուն ա արել,  
 Մեծ առուն ա վարարել,  
 Իմ յարն էլ տանից հեռու,  
 Հիմի նոր տուն ա դառել  
 Ջա՞ն, ջա՞ն, գյուղում ջա՞ն,  
 Գյուղում, գյուղում, գյուղում ջա՞ն:  
 Ամուն կարմիր արել,  
 Մադի կանաչ տերել,  
 Հեռվից-հեռու կարոտով,  
 Առա յարիս բարել:

Ջա՞ն, ջա՞ն, գյուղում ջա՞ն,  
 Գյուղում, գյուղում, գյուղում ջա՞ն:  
 Աշնան անուշ արեխին,  
 Կարմիր խնձոր տերեխին,  
 Կաց քաղեմ փեշս լցնեմ,  
 Հնծա տանեմ իմ յարին  
 Ջա՞ն, ջա՞ն, գյուղում ջա՞ն,  
 Գյուղում, գյուղում, գյուղում ջա՞ն:  
 Ջեն ա, ձյուն ա էկել,  
 Իմ յարը տուն ա էկել,  
 Մոր կարոտը քաշեով,  
 Էլե՛ թաքոն ա էկել  
 Ջա՞ն, ջա՞ն, գյուղում ջա՞ն,  
 Գյուղում, գյուղում, գյուղում ջա՞ն:

### 156. ԱՂՋԻ ԵՐԱՆԻ

Էս ինչ նախշուն կտոր ա,  
 Խսկը նորահարսի շոր ա,  
 Աղջի երանի  
 Աղջի երանի,  
 Ալ էլնեմ,  
 Աղջի երանի,  
 Աղջի երանի,  
 Թշիդ վրեն  
 Խալ էլնեմ:  
 Էդ ի՞նչ նազ ա, անում ես,  
 Խելքս գլխս տանում ես,  
 Աղջի երանի,  
 Աղջի երանի,  
 Ալ էլնեմ,  
 Աղջի երանի,  
 Աղջի երանի,  
 Թշիդ վրեն  
 Խալ էլնեմ:

### 157. ՅԱՐ ԼԵ՛, ԼԵ՛

Սարեն իշավ ձիավոր,  
 Սաղմոսը ծոցին սավոր,  
 Յար, լե՛, լե՛, լե՛,  
 Յար, լե՛, լե՛, լե՛,  
 Հրես եկավ իմ ախակեր,  
 Երեք օրվա թագավոր,  
 Յար, լե՛, լե՛, լե՛,  
 Յար, լե՛, լե՛, լե՛:  
 Յար ջան, մերդ մեռել ա,  
 Շորերդ կեղտոտել ա,  
 Յար, լե՛, լե՛, լե՛,  
 Յար, լե՛, լե՛, լե՛,  
 Լվանամ վարդի շորվ,  
 Զորացնեմ բերնիս գուղվ,  
 Յար, լե՛, լե՛, լե՛...

**158. ԳԵՂԻ ՄԵԶԸ**

Կեղի միջին մի հատ ես,  
Ա՛յ աղջիկ քո դարդից,  
Ի՞նչ անեմ,  
Մի հատ ես, ոսկի հատ ես,  
Արի տանեմ:  
Միլ ու ժաղկում խաղում ես,  
Ա՛յ աղջիկ քո դարդից,  
Ի՞նչ անեմ,  
Երեսիս ծիծաղում ես,  
Արի տանեմ:

**159. ՀԵՅ, ՀԵՅ, ԶԱՆ (Յայլի)**

Սար կա սարի նման չի  
Հե՛յ, հե՛յ, զա՞ն,  
Նազ մի արա,  
Ցար կայ յարի նման չի  
Մինթանով թող մի արա  
Քո մերն ինձի հավան չի,  
Հե՛յ, հե՛յ զա՞ն,  
Նազ մի արա,  
Սերս սերի նման չի,  
Մինթանով թող մի արա:

**160. ՀՐԵՆ ՖԱՅՏՈՆԸ**

Հրեն ֆայտոնը  
Գալիս ա  
Մարոն միջին  
Լալիս ա,  
Մի՛ լար, մի՛ լար  
Մարո զան  
Հրես յարոն  
Գալիս ա:

**161. ՍՈՆԵ ԶԱՆ**

—Սոնե զա՞ն  
—Հա՛ զանեշա՞ն,  
—Ես Սոնեյի  
Սոյին մեռնեմ,  
Նրա շիշմատ  
Բոյին մեռնեմ:  
—Սոնե զան  
—Հա՛, զանեշա՞ն,  
—Սոնե զան,  
—Հա՛, զանեշա՞ն:

**162. ԴԵ ԼԵ ԶԱՆ**

Արի, յար զան,  
Արի, մոտիկ,  
Հա դի լի զան

Լե զան, լի զան,  
Թեղի կառնեմ  
Կարմիր գոտիկ,  
Հա դի լի զան  
Աղբբեշան:  
Դու նատել ես  
Երկանք կաղաս,  
Հա դի լի զան,  
Լե զան, լի զան  
Թուխ ծամերիդ  
Հետ կխաղաս,  
Հա դի լի զան  
Աղբբեշան:

**163. ԹԱԶԱ ՏԱՐԻ**

Սարերի կարմիր լակեն եմ,  
Բարով եկար,  
Հազար բարի,  
Իմ մոր մինուճար բալին եմ:  
Խերով եկար,  
Թազա տարի:  
Թասը լցնեմ կարմիր գինով,  
Բարով եկար,  
Հազար բարի,  
Փլավ բերեմ ոսկե սինով,  
Խերով եկար,  
Թազա տարի:  
Ամբարս լցնեմ բերք ու բարի  
Բարով եկար,  
Հազար բարի,  
Ալլուր, ցորեն, հաճար, գարի,  
Խերով եկար,  
Թազա տարի:

**164. ԼՈՒՍՆԱԿԲ ԱՄՊԻ ՏԱԿԻՆ**

Լուսնակը ամպի տակին,  
Ցա՞ր,  
Զեր տունը ճամփի տակին,  
Ցա՞ր,  
Ես քեզ որտեղ սիրեցի,  
Ցա՞ր,  
Զեր բաղի ծառի տակին,  
Ցա՞ր,  
Յար նա՞յ նա՞յ նա՞յ,  
Յար նա՞յ նա՞յ նա՞յ (2):

**165. ՏԻՐՈՒԽ ԶԱՆ**

Էդ պաղ զրեն ինձի զուր տուր,  
Տիրուն զան,

Ղարիբ յարեն ինձի լուր տուր,  
Սիրուն շան,  
Շ՝ Շ՝  
Սիրուն շան,  
Շ՝ Շ՝  
Ուխարը սարից գեղը բերի,  
Տիրուն շան,  
Էդ քս սերեն ինձ մի էրի,  
Սիրուն շան,  
Շ՝ Շ՝  
Տիրուն շան,  
Շ՝ Շ՝ սիրուն շան:

166. ՀԵՆՑ ՈՐ

Հենց որ բոլորի տարին,  
Նամակ ճամփեմ իմ յարին,  
Սիրունի՛կ,  
Սիրունի՛կ,  
Մաղիկ ես,  
Ինձ համար  
Աղոնիկ ես:  
Առավոտ բարի լուս,  
Գառներ տանենք դարիդուս,  
Սիրունի՛կ,  
Սիրունի՛կ,  
Մաղիկ ես,  
Ինձ համար  
Աղոնիկ ես:

167. ԷՆ ԽՎ ՕՐ ԷՐ

Էն ի՞նչ օր էր,  
Ա՞խ,  
Որ քեզի տեսա,  
Իմացա իմն ես,  
Վա՞խ,  
Մուրազիս հասա:  
Կեռ-կեռ ունիրդ,  
Ա՞խ,  
Դանակ ես անում,  
Ասես հոգուս հետ,  
Վա՞խ,  
Հանաք ես անում:

168. ԹԱԶԱ ՅԱՐԻՆ

Թազա յարին,  
Գյուղնուբարին,  
Կարոտել եմ,  
Իմ Դիլարին:  
Իմ Դիլարին,  
Մեկ ու ճարին,

Էրթամ բերեմ  
Գալող տարին:

169. ԱՐԻ ՅԱՐ ՃԱՆ

Արի, յար շան, արի,  
Ի՞նչ նազ ես անում,  
Անուշ յար շան,  
Ի՞նչ նազ ես անում,  
Սամամ կաքավի պիս,  
Փարվագ ես անում,  
Ան՛չը յար շան,  
Փարվագ ես անում:  
Կայնի մի գնա,  
Անուշ յար շան,  
Յարդ կմնա:  
Բաղի դուր բաց ա,  
Սուփրեն փռած ա,  
Անուշ յար շան,  
Սուփրեն փռած ա,  
Խորովածն ու գինին  
Մեշտեղ դրված ա,  
Անուշ յար շան,  
Մեշտեղ դրված ա:  
Կայնի մի գնա,  
Անուշ յար շան,  
Յարդ կմնա:

170. ԱՌԻ, ՅԱՐՈ

ԱՌի յարո, յարո շան,  
Ես քեզի զուրբան,  
Ես քեզի առնեմ ո՞ւր երթամ,  
Մեկ տեղ չունիմ,  
Որ հանգստանամ (2):

171. ՈՒԾՈՒԾ ՊՈՒԾՈՒԾՈՎ

Գնացի սարը մնձի,  
Ուզող-պուղուզով տղա,  
Ոտքս առավ մի կնձի,  
Կարմիր բլուզով տղա:  
Երթիկ-երթիկ բռնել ես,  
Ուզող-պուղուզով տղա,  
Երթկատակին բռնել ես,  
Կարմիր բլուզով տղա:

172. ՈՒՐԻ ԵՍ

Ուրի ես՝ կեռանալ մի  
Մեր զոնեն հեռանալ մի,  
Յար արևտ կսիրես,  
Սիրուն ես՝ մոռանալ մի:  
Ելի գալդ եմ իմացել,

Աշքս ճամփիդ է մնացել,  
Քեզ համար գիշեր-ցերեկ,  
Ա՛խ, անելով եմ մնացել:

### 173. ԹԱԿՈՆՈՒՄԸ

Բակոնումը կայնել ես,  
Վարդի նման բացվել ես,  
Մտիկ չես տա իմ հալին,  
Մատաղ թշիդ ջուխտ խալին:  
Աստված սիրես,  
Կրակովդ ինձ մի էրի:  
Աստված սիրես,  
Դարդ ու ցավեր էլ մի բերի (2):

### 174. ԱՅ ՍԱՐԵԲ

Ա՛յ սարեր, թփեր,  
Ա՛յ ձոր, ա՛յ ճամփա,  
Ասեք յարիս,  
Մթնել ա, թող տուն գա,  
Յարալու սիրոս մի քիլ թող թնդա:  
Անուշ յար, դե արի,  
Արտերից տուն արի,  
Ճամփերը կանաչել են,  
Քեզի լավ ճանաչել են,  
Դե թոփ, շուտ արի:

### 175. ՍԱՐԻ ՍՄԹՈՒԼ

Սարի սմբուլ,  
Կանշում եմ շուտ արի,  
Բաղի բլրուլ,  
Իմ սերը մի մարի:  
Յար ջան, սարի սմբուլ,  
Յար ջան, բաղի բլրուլ,  
Քեզ եմ կանշում  
Դե արի, շուտ արի:

### 176. ԳԱՐԴՈ

Դարդո՞...  
Լվացք արա ջո՞ւր մի թափա,  
Վա՛յ լե, տնավեր,  
Ես ջահել եմ, ինձ մի խափա  
Յաման դարդո:  
Դարդո՞...  
Գեղով կասեն քո յար գեշ ա,  
Վայ լե, տնավեր,  
Ինձի համար թուխ քիշմիշ ա,  
Յամա՞ն դարդո:  
Դարդո՞...  
Հերիք անցնես մեր տան բոլոր,  
Վայ լե, տնավեր,  
Ինձի արիր խելքամոլոր,

Ցաման դարդո՞:  
Դարդո՞ ...  
Ես արի ա՛խ, դու արիր՝ վա՛խ,  
Վայ լե, տնավեր,  
Մեր սարդին էր եկնոց կախ,  
Յաման դարդո:  
Դարդո՞ ...  
Գեղի բոլոր մանդր շուշա,  
Վա՛յ լե, տնավեր,  
Գեղին մոտիկ յարն անուշ ա,  
Յամա՞ն դարդո:

### 177. ԹԱՏՈՒԱ

Բատոլա ջան, բատոլա,  
Հավեն անուշ կցոլա:  
Աղբրի ակեն կռնել ես,  
Բատոլա ջան, բատոլա,  
Աղբրի թասը բռնել ես,  
Հավեն անուշ կցոլա:  
Սարի ուսին պաղ քամի,  
Բատոլա ջան, բատոլա,  
Քամին քաքովդ տանի,  
Հավեն անուշ կցոլա:  
Բաղիս միջին կա նոնի,  
Բատոլա ջան, բատոլա,  
Խնձոր գցեմ՝ դու բռի,  
Հավեն անուշ կցոլա:

### 178. ՍԻՐԵԼ ԵՄ

Սիրել եմ, սիրել եմ,  
Սիրստան,  
Վախենամ տանեն ոստան:  
Վախենամ տանեն ոստան,  
Մամեր վեր գլխուս դուս տան,  
Էն խորուս տղի քելքը,  
Սիրել եմ, սիրել եմ,  
Սիրստան,  
Տարավ փմ գլխի խելքը  
Վախենամ տանեն ոստան:

### 179. ԱՐԵԳՆԱԶ, ՀԵՐԻՔՆԱԶ

Սիրստի, զամար, ջանե՞ ջան,  
Բոլոր երես Արեգնազ,  
Ունքներ կամար, ջանե՞ ջան,  
Մոլորել ես Հերիքնազ,  
Աշերդ ի խաժ, ջանե՞ ջան,  
Բոլորել ես Արեգնազ,  
Մամերս ի կարճ, ջանե՞ ջան,  
Մոլորել ես, ջանե՞ ջան, Արեգնազ,  
Պստի բերան, ջանե՞ ջան,  
Բոլորել ես Արեգնազ:

Եամերդի էրան, շանե՛ շան,  
Մոլորել ես, Հերիփնազ:

180. ԼԱՅԻ ՄԵՐ

Լաճի մեր, լաճի մեր՝  
Այլան-օթախ,  
Թող մեջ քիր,  
Որ հով էլնի.  
Լա՛ճ ի պիրե, լա՛ճ:  
Քյածի մոր, քյածի մոր  
Տարեք թալին,  
Թրքի խոտեն  
Թող քիթ պոնի,  
Քա՛ծ ի պիրե, քա՛ծ:  
Լաճի մոր, լաճի մոր,  
Տարեք բաղչեն,  
Քյաղի վարդեր,  
Վարդ խոտոտի,  
Լա՛ճ ի պիրե, լա՛ճ:  
Քածի մոր, քածի մոր,  
Տարեք հանգիր,  
Սոխ քյախնիքի,  
Սոխ խոտոտի,  
Քիթ մումուա,  
Քյա՛ծ ի պիրե, քյա՛ծ:

181. ՀԱԶԱՐ ԷՐՆԵԿ

Հազար էրնեկ էն ավուր...  
Դժոլ-զուռնա շալեցուցին,  
Կարմիր-կանանշ շոր խագուցին,  
Խարու ու փեսա ձեռ բռնեցին,  
Ժամու դռան կայնեցուցին,  
Ավետարան կարթացուցին:  
Տո՞ւ, տո՞ւ, տո՞ւ, տո՞ւ  
Տո՞ւ, տո՞ւ, տո՞ւ:

182. ՎԱՅ ԼՈ ...

(Կատակերգ)  
Աղջի, օր դու ինձի չսիրիր,  
Էն գախ, որ ձեր դռնեն կընցնի,  
Ընչի՞ դու դու կայնեցիր,  
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, լո՛, վա՛յ լո՛,  
Աղջի, օր դու ինձի չսիրիր,  
Էն գախ, որ դու լվացք կենիր,  
Ընչի՞ էն ջուր կփրիրիր,  
Վա՛յ, վա՛յ լո՛, վա՛յ լո՛,  
Աղջի, օր դու ընձի չսիրիր,  
Էն գախ, որ դու կով կկթիր,  
Ընչի՞ էն ավել թող-զուռնան կաներ,  
Վա՛յ լո՛, վա՛յ լո՛, վա՛յ լո՛:  
Աղջի, օր դու ընձի չսիրիր,  
Էն գախ, որ դու ավել կանիր,

Բնշի՞ էն ավել թող-զուռնան կաներ,  
Վա՛յ լո՛, վա՛յ լո՛, վա՛յ լո՛:

183. ԳԵՐԻԿՈ ԶԱՆ

Մեր զան առաջ քառուուն կարաս,  
Դերիկո շան,  
Քառոսուն կարսի գինին էր խաս,  
Դերիկո շան,  
Զուխտակ շերան եկան անցան,  
Դերիկո շան,  
Մեկն էր լորիկ, մեկն էր թառլան,  
Դերիկո շան:

184. ՀԱՄ ԳՅՈՒ

Համ գյու, համ վարդ,  
Համ նարգիզ,  
Չոլի կռոնկ, էրկեն վիզ,  
Կարգե մամե, կարգե զիս,  
Դորգար մարդու մի տու զիս,  
Փես կտաշա մոռնա զիս:  
Համ գյու, համ վարդ,  
Համ հարգիզ,  
Չոլի կռոնկ, էրկեն վիզ,  
Կարգե մամե, կարգե զիս,  
Դործավորի մի տու զիս,  
Էրթա գործի, մոռնա զիս:  
Համ գյու, համ վարդ,  
Համ նարգիզ,  
Չոլի կռոնկ, էրկեն վիզ,  
Կարգե մամե, կարգե զիս,  
Վարժապետի դու տու զիս,  
Ճժեր կարդու, պախա զիս:

185. ԻՄ ՈՐԴԻ ՍՈՒԽԱԿԻ

Երևան երթալու է,  
Վա՛յ լի՛, լի՛, լի՛,  
Վա՛յ լո՛, լո՛, լո՛,  
Քերեկան կարդալու է,  
Իմ որդի Սոխակը:  
Ես ինչ կանեմ քերեկան,  
Վա՛յ լի՛, լի՛, լի՛,  
Վա՛յ լո՛, լո՛, լո՛,  
Ցար ոնեմ ուսումնական,  
Իմ որդի Սոխակը:  
Քելե սար, արա սեյրան,  
Վա՛յ լի՛, լի՛, լի՛,  
Վա՛յ լո՛, լո՛, լո՛,  
Նմանի եղիկ-շերան,  
Իմ որդի Սոխակը:

186. ՆԱՄՐՈՒԹԱ ՍԱՐԵՐ

Նամրութա սարեր  
Մըժ էր, դռման էր,

Սերոբի գառներ,  
Սուսան շան,  
Քեղի զորբան է:  
Նամրտիթ սարեր  
Պատեր էր պալ ձռն,  
Սուսան կկանչեր.  
—Սերոբ շա՞ն,  
Փախչինք, մտնիք տուն:

187. Լե, կձե, լե, լե  
Կաքավ կայն վեր քարին  
Լե՛ կճե, լե՛, լե՛,  
Խարար կոտա իմ յարին,  
Լե՛ կճե, լե՛, լե՛,  
Լե՛, լե՛, կճե, յար ոնեմ:  
Բաղի դուռը բաց անեմ:  
Լե՛ կճե, լե՛, լե՛,  
Խոտ քաղղղին հաց տանեմ,  
Լե՛ կճե, լե՛, լե՛,  
Լե՛, լե՛, կճե, յար ոնեմ:  
Լորիկ թռավ վեր քարին,  
Լե՛ կճե, լե՛, լե՛,  
Ոշխար կարծա վեր սարին,  
Լե՛ կճե, լե՛, լե՛,  
Լե՛, լե՛, կճե, յար ոնեմ:

188. ԿԱՐՄԻՐ ՎԵԼՈՅՈՎ. ԱՂՋԻԿ  
Կարմիր վելոյով աղջիկ,  
Նարո՛յ, նարո՛յ, նարո՛յ շան,  
Քո խոր սաս քե տա ձիկ,  
Նարո՛յ, թաժա յարո շան:  
Էն խորտ տղի քելքը,  
Նարո՛յ, նարո՛յ, նարո՛յ շան,  
Տարավ իմ գլխու խելքը,  
Նարո՛յ, թաժա յարո շան:  
Մոռի հառուն լողացա,  
Նարո՛յ, նարո՛յ, նարո՛յ շան,  
Մոռի շուշեն գողացա,  
Նարո՛յ, թաժա յարո շան:  
Ցոք տարի հիվանդացա,  
Նարո՛յ, նարո՛յ, նարո՛յ շան,  
Քեզի տեսա, լավացա,  
Նարո՛յ, թաժա յարո շան:

189. ՆԱՐԾՆՁԻ ԲԱՍԻ  
Քյամար եմ կապե,  
Լենքը մի մատ ա,  
Զանե շա՞ն,  
Սիրել եմ, կառնեմ,  
Զանամ աղքատ ա,  
Զանե շա՞ն:

Նարընչի բասի,  
Նարընչի բասի,  
Զանե շա՞ն,  
Սիրել եմ, կառնեմ,  
Անոնն Աղասի,  
Զանե շա՞ն:  
Քյամար եմ կապել,  
Լենքը մի թիղ ա,  
Զանե շա՞ն,  
Սիրել եմ, կառնեմ,  
Զայնամ թիթիղ ա,  
Զանե շա՞ն,  
Նարընչի բասի...  
Բոստան եմ ցանել  
Էս տարվա տարին,  
Զանե շա՞ն,  
Գելավ մի շամամ,  
Ղրկեի յարիս,  
Զանե շա՞ն:  
Նարընչի բասի ...

190. ԷՐԹԱՆՔ ՍՏԱՄԲՈԼ  
Էրթանք Ստամբոլ,  
Դատենք փարա բոլ,  
Առնենք զուխտ մի սոլ,  
Տանինք յարոյին:

Արի՛, յար, արի՛,  
Խոռվ մի կենա,  
Սուս աստվորի բան,  
Զի, քե լի մնա:  
Էրթանք Պստի գեղ,  
Բերենք տիկ մի եղ,  
Անենք ձվածեղ,  
Տանենք յարոյին:  
Արի՛, յար, արի՛,  
Խոռվ մի կենա,  
Սուս աստվորի բան  
Զի, քե լի մնա:  
Ե՛լ էրթանք Շուշի,  
Առնենք ալ-փուշի,  
Զուխտըմ էլ զառ մաշիկ,  
Տանենք յարոյին:  
Արի՛, յար, արի՛,  
Խոռվ մի կենա,  
Սուս աստվորի բան  
Զի, քե լի մնա:

191. ՋԵՆԻ, ՋԵՆԻ  
Դաստե մի վարդ եմ քաղե,  
Ա՛յ ջենի, ջենի,  
Քեզի համար եմ պախե,

Դաստիմ խնկենի  
Արազը բուզ ա, բուզ ա,  
Ա՛յ Զենի, Զենի,  
Իմ սիրտը քեզի կուզա,  
Դաստիմ խնկենի  
Ալ բոխես ուզեմ, ուզեմ,  
Ա՛յ Զենի, Զենի,  
Իմ խեր լի քեզի շուզե,  
Դաստիմ խնկենի

### 192. ԷՍՈՆՔ ԶՄՄԵՆ

Էսոնք զմմեն  
Տարտակ պան ի,  
Կարմիր գիճին  
Աղվոր պան ի  
—Ա՛յ տո՞ւց, տո՞ւց,  
Զան տո՞ւց, տո՞ւց  
Տո՞ւց տո՞ւց տո՞ւց  
Էկեք էսօր լավ քեֆ անենք,  
Դուշմաններիս աշքը հանենք,  
Հե՞յ տո՞ւց, տո՞ւց,  
Տո՞ւց, տո՞ւց, տո՞ւց,  
Զան, տո՞ւց, տո՞ւց, տո՞ւց:  
Քեֆ արողին կանչել կուտամ,  
Ով քեֆ շանի խրկել կուտամ,  
Ա՛յ տուց, տո՞ւց  
Տո՞ւց, տո՞ւց, տո՞ւց,  
Զան, տո՞ւց, տո՞ւց, տո՞ւց:

### 193. ՆԱՐԳԻԾ 03

Ես ինչ եմ արել քեզի,  
Նարգիզ, օ՛յ, նարգիզ  
Երեցիր, վասիր ընձի,  
Նարգիզ, օ՛յ, վասվում եմ:  
Զերիս բերանը նեղ ա,  
Նարգիզ, օ՛յ, նարգիզ,  
Զերս խնձորի տեղ ա,  
Նարգիզ, օ՛յ, վասվում եմ:  
Քեզի տեսսա զառա ես,  
Նարգիզ, օ՛յ, նարգիզ,  
Մի պուտ ջուր տուր, վառա ես,  
Նարգիզ, օ՛յ, նարգիզ:

### 194. ՆՈՒԲԱՐ

Նուբա՛ր, Նուբա՛ր, թաժա Նուբար,  
Ընչի՞ կերար մըռու բիբար:  
Նուբարի էրս բոլոր էր,  
Նուբա՛ր, Նուբա՛ր, թաժա Նուբար,  
Նուբարի ճամբախ մըլոր էր,  
Ընչի՞ կերար մըռու բիբար:  
Նուբարի աշքեր խոմար էր,

Նուբա՛ր, Նուբա՛ր, թաժա Նուբար,  
Նուբարը մոր մեկ ու ճար էր,  
Ընչի՞ կերար մըռու բիբար:

### 195. ԱՐՏ ԵՄ ՑԱՆԵ

Արտ եմ ցանե զարի, (2)  
Արի՛, յար շան, արի՛,  
Կառնեմ զալող տարին  
Արտ եմ ցանել բամբակ (2)  
Թե որ շառնես, աղջի՛,  
Վնոս որբակերի:

### 196. ՔՅԱ. ՍԵՎԱՎՈՐ

Քյա սև, սևավոր մարե,  
Քյա սև, սրտազալար մարե,  
Հորի՞ իմ տոն ափիրեցիր,  
Իմ կորիճ,  
Իձնե խանեցիր:  
Քյա, սև, սևավոր աղջիկ  
Քյա՞ սև, սրտազալար աղջիկ,  
Արի քե տամ Վանա խոչին,  
Վանա խոչին, կարմիր բոխչին:  
Քյա սև, սևավոր մարե,  
Ես ի՞նչ կանեմ Վանա խոչին,  
Վանա խոչին, կարմիր բոխչին  
Ղուրբան կանեմ իմ Սաբոյի,  
Բիզ քյոլողին, նախրափետին,  
Չարիս թելին... վա՞յ:  
Նախրափետը ծեռը կառնի,  
Գեղի նախիր հանդ կտանի,  
Հանդեր ման զա,  
Իրկուն գեղ զա,  
Գեղեն տոն զա,  
Թալքի աշքին  
Քիլ մը քոն զա:

### 197. ՇՈՒՏ-ՇՈՒՏ ՔԵԼԱ

Շուտ-շուտ քելա, մի հելա,  
Քա տղա քելա, մի հելա,  
Լավ տղի լոթութենեն,  
Աղջիկ լի կանա քելա:  
Գյամին էկալ լափ տալեն,  
Շուտ-շուտ քելա, մի հելա,  
Ջուխտակ խնձոր ծափ տալեն,

Քլա տղա քելա, մի հեվա,  
Լավ տղի լոթոթնենն,  
Աղջիկ լի կանա քելա:

### 198. Նինսկին

Թունդիր գառի բայան բոց,  
Նինարե՛, Նինարե՛,  
Աղջիկներու սպիտակ ծոց  
Նինարե՛, Նինարե՛,  
Տղեկներու դարդ ու խոց,  
Նինա՛ր, բոյդ շինար է:  
Հերիք անցնես մեր պատով,  
Նինարե՛, Նինարե՛,  
Մեր պատ ըլավ քու ապով,  
Նինա՛ր, բոյդ շինար է:  
Աղդ օրվա մեր յախնին  
Նինարե՛, Նինարե՛,  
Տերտեր կերե՛ տիրոյնին  
Նինա՛ր, բոյդ շինար է:  
Նախիր կայնե վեր սարին,  
Նինարե՛, Նինարե՛,  
Թուխթ մը ճամփեմ Նինարին,  
Նինա՛ր, բոյդ շինար է:

### 199. Աև Թելի

Ա՛խ, Թելի՛, Թելի՛, Թելի յար,  
Ճարկենք, թող խաղա, Սոնե շան,  
Նշանելու յարս դու ես,  
Ա՛խ Թելի՛, Թելի յար,  
Ոսկիս ու քամարս դու ես,  
Ճարկե՞նք, թող խաղա, Սոնե շան,  
Ալ բաղչիս բարը դու ես,  
Ա՛խ Թելի՛, Թելի յար,  
Իմ գովական յարը դու ես,  
Ճարկե՞նք, թող խաղա, Սոնե շան:

### 200. Լոհրկե

Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,  
Սանիկդ գրկե,  
Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,  
Ջանիկդ գրկե:  
Օշախը վառեմ՝ ձու խաշեմ,  
Էրեհիդ խալին աշեմ:  
Կարմիր գինին մազա էր,  
Յարիս շուշպեն թազա էր:  
Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,  
Սանիկդ գրկե,  
Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,  
Ջանիկդ գրկե:

### 201. ԳՈՒԹԱՆ

Ումուդ ունեմ  
էն սուրբ խալին,  
Մատաղ էլնեմ  
Կյութնի մածին,  
Կյութան շեներ՝  
Աշխար ի՞նչ էր:  
Կյութնի թախում  
Նմուշ-նմուշ  
Կյութնի կրալում  
Քընց էն անուշ:  
Կյութան շեներ,  
Աշխարհ ի՞նչ էր:  
Աշխարհի շեն  
Վեր կյութնին էր,  
Կյութան շեներ,  
Աշխար ի՞նչ էր:

### 202. ԽԱԹՈՒԽՆ ԽԱՐՍԽ

Խաթուն խարսեն  
Արշկան մանի,  
Լելե կասե,  
Խաթուն խարսեն  
Կրտնակ քաշե,  
Լելե կասե,  
Խաթուն խարսեն  
Հաց կթխա,  
Լելե կասե:  
Խաթուն խարսեն  
Կով կկթե,  
Լելե կասե,  
Խաթուն խարսեն  
Հմմեն պրծե  
Լելե կասե:

### 203. ԱՂՋԻ, ԱՐԵ

Աղջի, արե քե տամ քաղաք,  
Նստիս կայնիս խանմնակ:  
—Զեմ ուզե, դադո՛,  
Զեմ ուզե, բարո՛,  
Դարդես դու խարար տու, դադո (2):  
—Աղջի, արե քե տամ նազար  
Աև Հարովին մազես ալուր:  
—Զեմ ուզե, դադո՛,  
Զեմ ուզե բարո՛,  
Դարդես դու խարար տու, բարո:  
—Աղջի՛, ընչի՞ շուզես աղեն,  
Կուզես շոբնի շիլախ տղեն:

204. ՀԱՍՏԱՆ ՊԱԼՈ

Հասան դալեն մենք զնացինք,  
էնտեղ սոված մենք մնացինք:  
Վերան դառնա Հասան-դալեն,  
Սատկի էնվեր փաշի բալեն,  
Մերս թողի տանը լալեն  
Հասան-դալեն քար ու քոա,  
Գյուղեն մեջը կֆոնփատ  
Գյուղի յարեն կմոմոա,  
Վերան դառնա Հասան-դալեն,  
Սատկի էնվեր փաշի բալեն,  
Քուրս տանը թողի լալեն:  
Հասան դալեն, շատ գժար էր,  
Էնվեր փաշի սիրտը քար էր  
Վերան դառնա Հասան-դալեն,  
Սատկի էնվեր փաշի բալեն,  
Բալես թողի տանը լալեն:

205. ԱԽ ՆԱՆԻ...

Զեռներս կապիցին,  
Գամին դրեցին,  
Լալով ու ողբալով,  
Ճամփու գցեցին:  
Ա՛խ նանի՛, նանի՛,  
Ջա՛ն, նանի՛, նանի՛,  
Քից՝ ջուրը տանի:  
Հարավի քամին մտել էր գամին,  
Դրկում էր Անին:  
Փշի՛ր, քամի, փշի՛ր,  
Սալդաթ են տանոմ,  
Տանից ու վաթնից,  
Նանից են հանոմ:  
Ա՛խ նանի՛, նանի՛,  
Ջա՛ն, նանի՛, նանի՛,  
Քից՝ ջուրը տանի:  
Հարավի քամին քշում էր գամին,  
Դրկում էր Անին:

206. ԿԱՆՉԵ ԿՈՒՌԻՆԿ...

Կանչե, կռոնկ, կանչե,  
Քանի գարուն է,  
Սալդաթների սիրտը  
Լիքը արուն է:  
Մտա կանցիլարը,  
Վառի մոմերը,  
Զեռս գցի հանի  
Պերվի նոմերը:  
Մտա կանցիլարը,  
Կայնած մնացի,  
Խաբար տարեք մորս  
Սալդաթ զնացի:

Աղե՛, գաթա թիսա,  
Դիր տանեմ հետո,  
Դիրքերը փորելուց:  
Քեզ զցեմ միտու

207. ՎԱԳՈՒՆԻՆ

Վագոն մի բանի,  
Վագոն մի բանի,  
Վագոն՝, բախտդ ընկնեմ,  
Ցարիս մի տանի:  
Վագոն՝, մի ժաժա,  
Վագոն՝, մի ժաժա,  
Վագոն՝, բախտդ ընկնեմ,  
Ցարս էր ժաժա:  
Վագոն՝, մի թնդա,  
Վագոն՝, մի թնդա,  
Վագոն՝, բախտդ ընկնեմ,  
Թող յարս խնդա:  
Սալդաթ մի զնա,  
Սալդաթ մի զնա,  
Ցամա՞ն, յար շան,  
Ցարդ կմեա...  
Ցամա՞ն մնա՞ն:

208. ԿՈՒՌԻՆԿ ԻԶԱՄ ՏԵՂԴ

Կուռնկ իշած տեղդ, յամա՞ն,  
Զայիր, շիման է,  
Աշխարքին արև է,  
Ինձի դուման է:  
Կանչե՛ կռոնկ, կանչե՛,  
Ղարիբս տոն գա,  
Սրտիս յարեքը լավանա,  
Աշքերիս քոն զա:  
Շեն հալրիկ, շեն մայրիկ,  
Տոնդ շեն մնա,  
Ես զնում եմ լարիբ երկիր,  
Տեղդ լեն մնա:  
Էն քամբախ բալնիցեն,  
Տասներկու կամար,  
Բալնիցեն շնել են,  
Իմ յարի համար:  
Գնալով, գնալով յար շան,  
Երկրից հեռացա,  
Տասնըոթ տարվա մեջը, յամա՞ն,  
Դարդի տիրացա:  
Կանչե՛, կռոնկ, կանչե՛,  
Սարերը դուման է,  
Ասեք մորս՝ սալդաթ կերթամ,  
Հալս յաման է:

209. ԲԱԽՏԱ ՂԱՐԱ ԷՐ

Բախտս զարա էր  
Մայրիկ շան,

Սիրտս յարա էր:  
 Նստեցի մաշինն,  
 Դեպի Դիլիջան,  
 Մայրիկս կանչում էր՝  
 Սալդաթ բարա զան:  
 Բախտս զարա էր,  
 Անուշ զան,  
 Թռվի յարա էր:  
 Նստեցինք վագոնը,  
 Մինչև Երևան,  
 Լոսաղեմին քշին,  
 Շատ հեռու տարան:  
 Բախտս զարա էր  
 Անուշ զան,  
 Սիրտս յարա էր:

### 210. ԽՆՁ ԿԸՆԵՐԻ

Ի՞նչ կլիներ,  
 Նիկոլը սատկեր,  
 Ի՞նչ կը լիներ,  
 Յարս գար տուն,  
 Դինչ կը լիներ:  
 Սարերի լալեն,  
 Սարերի լալեն,  
 Կրակն ընկներ բալքի,  
 Նիկոյի բալեն:  
 Սարերի ձունը,  
 Սարերի ձունը,  
 Աստված քանդեր,  
 Նիկոյի տունը:  
 Կաքավը ձորին,  
 Կաքավը ձորին,  
 Նիկոյի էրեսից,  
 Հասանք էս օրին:  
 Ա՞խ, մեր գեղ բախտը,  
 Ա՞խ, մեր սև բախտը,  
 Տակեն վեր շրջվեր,  
 Նիկոլի թախտը:  
 Նիկոլը սատկեր  
 Ի՞նչ կլիներ,  
 Յարս գար տուն,  
 Դինչ կը լիներ:

### 211. ՆԻԿՈԼԻ ՔԱՐԻՆ

Նստեմ նիկոյի քարին,  
 Նստեմ նիկոյի քարին,  
 Ապելացի անեմ,  
 Նիկոյի ապիդ բալին:  
 Էդ էլ իր քոռ բախտեն,  
 Նիկոյն ընկավ թախտեն,

Ջուխտ ալքերով քոռացավ,  
 Սալդաթին մոռացավ:

212. ԸՆԿԵԼ ԵՄ ՍԱԼԴԱԹ  
 Ընկել եմ սալդաթ,  
 Ընկել եմ սալդաթ,  
 Մայրիկ զան,  
 Ո՞ւմ անեմ գանգատ:  
 Ընկել եմ գերի,  
 Ընկել եմ գերի,  
 Քուրիկ զան,  
 Նամակ տուր, բերի:  
 Գերմանու գերի,  
 Գերմանու գերի,  
 Մայրիկ զան,  
 Զենս չի բերի:  
 Գերմանեն քոռար,  
 Գերմանեն քոռար,  
 Քուրիկ զան,  
 Սալդաթին մոռար,  
 Գերմանեն վատ է,  
 Գերմանեն վատ է,  
 Մայրիկ զան....  
 Գերմանու սարն եմ,  
 Գերմանու սարն եմ  
 Անուշ զան,  
 Դարձա՝ քեզ կառնեմ:

### 213. ՄՏԱ ԿԱՆՑԻԱՐՈՒ

Մտա կանցիլարը,  
 Վասի մոմերը,  
 Զեռս զցի հանի  
 Սալդաթ նոմերը:  
 Կանցիլարի դռան.  
 Տաշած մեծ քարը  
 Մերս բերեց, զցեց  
 Դարբեղիարը:  
 Կանցիլարի դռուը,  
 Տամներկու կամար,  
 Մև օրով մեծացա  
 Սալդաթի համար:  
 Կանցիլարի դռուը,  
 Զաքոնվ տաշած էր,  
 Իմ յարի պատկերը,  
 Վրեն քաշած էր:

### 214. ՑԱՐ ԳՅՈՒԼԱ

— Ցար գյուղա,  
 Սիծեմակի բոնը,  
 Աստված քանդեր  
 Գերմանացու տունը:

— Յար գյուղա,  
Մեր օթափի հաշտը,  
Յարիս տարան,  
Պատերազմի դաշտը:

Յար գյուղա,  
Մեր օթափի փելք,  
Յարիս տարան,  
Պատերազմի մեջը:  
Յար գյուղա,  
Ես ի՞նչ կանեմ նամակ,  
Մալաց եմ,  
Կերթամ սարի քամակ:

### 215. ԿՈՌԵՆԻ ՍԻՐԵՍ

Կոռնկ, սիրես էրկու բալիդ արեր,  
Յարս մնաց նախշվանու սարերը:  
Լուսինը բոլորել ա,  
Կոռնկ սիրես էրկու բալիդ արեր,  
Իմ սիրտը մոլորել ա,  
Յարս մնաց նախշվանու սարերը:  
Իմ ճամփեն քար ու քոա,  
Կոռնկ սիրես էրկու բալիդ արեր,  
Սիրտս լիքը մոմուու ա,  
Յարս մնաց նախշվանու սարերը:

### 216. ԱԲԵՎՆ ԷԼԱՎ.

Արեն էլավ կամար-կամար,  
Էս լուրն էլավ մեզի համար,  
Մակարից էլավ հրաման,  
Որ հայլիցը սալդաթ տարան:  
Էկան գրեցին ձիանը  
Մակարից հասավ զիանը,  
Սալդաթի հասավ Սարիզամիշ,  
Մեջքին կապած կապուտ դայիշ:  
Սալդաթ տղեն քանաքեռ ա,  
Թվանքն ուսին ծանդր բեռ ա,  
Տունը քանդված պրիստավը,  
Ձոկեց ջահեների լալը:  
Էլ մենք լունենք միթթարանք,  
Երկնոց գետից ընկանք, կորանք:  
Անարատ կաթ աստվածածին,  
Դու սաղ պահես նանի բալին:

### 217. ՏԱՆՈՒՄ ԵՆ

Տանում են, աղի շան,  
Տանում են,  
Տանում են, վաթանից  
Հանում են:  
Ամա՞ն, տարան իմ յարին  
Տանում են, աղի շան,

Տանում են,  
Տարան իմ մեկումարին,  
Տանում են,  
Վաթանից հանում են:

### 218. ԻԳԻՒՐՈՒ ՍԱՐԵՐԸ.

Իգիրու սարերը վայնա էր,  
Հերանցս օթափը թոյնա էր:  
Նստած տեղս քար լունեմ,  
Իգիրի սարերը վայնա էր:  
Բաղ ունեմ ու բար լունեմ,  
Հերանցս օթափը թոյնա էր:  
Դարդն էկել ա տարել ա,  
Իգիրու սարերը վայնա էր,  
Ռ՞ոնց ա դու խարար լունես,  
Հերանցս օթափը թոյնա էր:

### 219. ՆԱՆԻ ԶԱՆ

Երանի մենակի ծնվածս օրը,  
Չերթայի համեկի, նանի շան,  
Սալդաթի շորը:  
Առավոտը լուսին,  
Ատակ գնացինք,  
Տանից ու վաթանից, նանի շան,  
Կարոտ մնացինք:  
Շատերը կոտորվան,  
Մնաց քիչ մասը,  
Էս կովիցը հասավ, նանի շան,  
Մեզ է վնասը:  
Տանուկթ տարվա մեջը  
Սալդաթ գնացի,  
Ռ՞ուսիրելիս քենից, նանի շան,  
Կարոտ մնացի:

### 220. ԱԴԵՍ ԸՆՁԻ ԲԵՐԵԼ Ա'...

Արես ինձի բերել ա,  
Օրորոցում պահել ա,  
Օրորոցում մեռնեի,  
Թաքել սալդաթ լզրվեի:  
Կաթնատոր մայորի շան,  
Ընչի բերեցիր,  
Սև օրով պահեցիր,  
Զոլեր գցեցիր:

### 221. ԱՄԱՆ ՄԱՐՈ

Մեր բաղի գուռը բաց ա, Մարո՛,  
Մարոն միշին քնած ա, յարո՛,  
Քնած լի, քրտնած ա, Մարո՛,  
Վարդն էրեսին փռած ա, յարո՛:  
Ցաման Մարո, Մարոյին, Մարո՛,

Սալդաթ տարան յարոյին, Մարո՛:  
Զեր զագի դուռը բաց ա, Մարո՛,  
Սպիտակ սուփրեն փոած ա, յարո՛,  
Յարո կողքին քնած ա, Մարո՛,  
Վարդաշրովլ լցված ա, յարո՛:  
Յաման Մարո, Մարոյին, Մարո՛,  
Սալդաթ տարան յարոյին, Մարո՛:

### 222. ԱՅ ԼՈԹԻ ՄԱՐԱՆ

Ա՛յ լոթի Մարան,  
Ա՛յ լոթի Մարան,  
Սալդաթ են տանում  
Յարոյիտ, տարո՞ն:  
Ուշի ուշ անեմ,  
Թառլան դուշ անեմ  
Իմ ախապոր բալին,  
Կանվա դոշ անեմ:  
Ա՛յ լոթի Մարան...  
Մաշինեն էկավ,  
Տաներկու վագոն,  
Յարոյին տարավ,  
Սալդաթ Դրակոն:  
Ա՛յ լոթի Մարան....  
Սաշինեն էկավ,  
Վազելին զնաց,  
Յարի այուիլը  
Իմ մոտը մնաց:  
Ա՛յ լոթի Մարան,  
Ա՛յ լոթի Մարան,  
Սալդաթ են տանում  
Յարոյիտ, տարո՞ն:

### 223. ՅԱՐ ԱՄԱՆ

Յար աման գյուլ աման  
Գյուկերս թազացել ա,  
Յարոյիս տանում են,  
Դարդիս շատացել ա:  
Սալդաթ տղին տուն լունի,  
Յար աման, գյուլ աման,  
Գյուկերս թազացել ա:  
Մի տեղ հալալ քուն լունի,  
Յարոյիս տանում են,  
Դարդերս շատացել ա:

### 224. ԱԴԵ ՋԱՆ, ԱԴԵ...

Մերս, քուս թողի,  
Սալդաթ զնացի,  
Գիշերը մտածի,  
Տերեկը լացի:  
Աղե ջան, ադե՛, (2)  
Բալեդ սալդատ է:

Քանի սուտկա,  
Չոլով փորսող զնացինք,  
Մարավ ու անոթի,  
Երկար մնացինք,  
Աղե ջան, ադե՛, (2)  
Դարդերս շատ է:

### 225. ԱՄԱՆ ՅԱՐ

Ամա՞ն յար, սարովն արի,  
Անուշ յար, դարովն արի,  
Ամփերը շարան-շարան,  
Ամա՞ն յար, սարովն արի,  
Իմ յարը սալդաթ տարան,  
Անուշ յար դարովն արի:

### 226. ԱԼ ՄԱՐԻՆԵՍ

Ալ մարինես ծալ մնաց,  
Միրելիս սալդաթ զնաց:  
Ծառ տնկեցի բար չունեմ,  
Ալ մարինես ծալ մնաց,  
Էլ դարդիման յար չունեմ,  
Միրելիս սալդաթ զնաց:  
Էրնեկ նրան դարդ չունի,  
Ալ մարինես ծալ մնաց,  
Ղարիբ երկիր յար չունի,  
Միրելիս սալդաթ զնաց:

### 227. ՍԱԲՈ ՅԱՐ ԶԱՆ

Էնեկ ծառ ըլնեի,  
Ճամփին բռանեի,  
Էնքան շմենեի,  
Տարիս տեսնեի:  
Սաթո յար ջան,  
Յարիս տեսնեի:  
Արի՛ յա՛ր, ջան արի՛,  
Տուն շեն արա,  
Քու քաղցր բալեքի,  
Տեղը լին արա,  
Սաթո յար ջան,  
Տեղը լին արա:  
Արազն անց կացանք,  
Ճամփին քարոտ էր,  
Տանից տեղից էլած,  
Միրու յարոտ էր,  
Սաթո յար ջան,  
Միրու յարոտ էր:

### 228. ԳՅՈՒԼԻ ԶԱՆ

Գյուկի ջան,  
Ֆայտոնի ակները,

Սալդաթ տարան,  
իմ աղիղ ախտերս:  
Գյուղի ջան,  
Կարմիր կովս գոմին,  
Մերդ քոռնար,  
Ո՞նց ևս ուտում սոմին:  
Գյուղի ջան,  
Մանոշակը քոլին,  
Մերդ քոռնար,  
Ո՞նց ևս քոռում չոլին:

### 229. ՀՈՊ ԳՅՈՒԼԻ

Հուզ Գյուղի, գյուղա, գյուղա, յարս:  
Գուզն եմ ասում, վերջը զոր ա, յարս:  
Հո՞ւ Գյուղի, թե զգիսս նամակ,  
Աման Գյուղի, կերթամ սարի քամակ:  
Հո՞ւ Գյուղի, ֆայտոնի մասերը,  
Սալդաթ տարան, քու սես-սաթ աշքերը:  
Հո՞ւ գյուղի, ինչ եմ անում նամակ,  
Սալդաթ տարան, կերթամ սարի քամակ:  
Հո՞ւ Գյուղի, գյուղա, գյուղա, յա՞րս,  
Գուզն եմ ասում, վերջը զոր ա յարս:

### 230. ՄԱՂՆ ԱՌԱ

Մաղն առա գացի ցանի,  
Զիբիցս խնձոր հանի,  
Տեսա յարս ընդի չէր,  
Ընդի մի հոռոց հանի:  
Վո՞ւզ, վո՞ւզ, տարան իմ յարը,  
Սալդաթ տարան իմ յարը,  
Բա ո՞նց կնի իմ ճարը:

### 231. ԱՆՏԵՐ ՄՆԱՐ

Անտեր մնար ....  
Զար ճամփան,  
Յարիս տարավ հանավ,  
Զարի Աստըրխան:  
Արի մի զնա,  
Դառի մի զնա,  
Ղարիբ տեղուն, յաման,  
Ղարիբ մի մնա (2):

### 232. ԱՄԱՆ Է՞Ց

Աման էյ, սև աշեր  
Ինչ անեմ,  
Զէ որ ասացիր  
Քո յարն եմ (2):  
Մետեխի բանդը բլել ա,  
Յարս տակին քնել ա,

Զեն տվի ձենս շառավ,  
Էն ինչ անուշ քնել ա:  
Աման էյ, սև աշեր,  
Ինչ անեմ,  
Զէ որ ասացիր  
Քո յարն եմ,  
Զէ որ ասացիր  
Քո յարն եմ:

### 233. ԿՈՌԻՆԿՆԵՐ

Երկնքումը շարան կապած թոշում եք,  
Իմ քաղցր բալեքից հեշ խարար շունեք (2):  
Իմ աշերուս քոմը կորավ,  
Կոռոնկներ...  
Օտարության մեջ հալիեցավ օրսու,  
Կացեք, նամակ գրեմ,  
Տարեք ինեղմ մորս (2),  
Ասեք՝ պանդուխտ որդիդ  
Չեկավ, կոռոնկներ ...

### 234. ԼԵՆԻՆՆ ԷԿԱՎ

Լենինն եկավ,  
Ջոռով զորքով,  
Մեղի ազատեց,  
Հողով զորքի  
Զեռքից իւեց,  
Գեղացոն տվեց,  
Խեղճ գեղացի,  
Ուրախացի,  
Էլ զոռքա չկա,  
Նրա տեղը  
Թև թիկոնք  
Մեծ լենինը կա:  
Դե, վեր կացեք,  
Ախակեր-տղերք,  
Զարկենք դաշնակին,  
Ու ձեռ զարկենք  
Մեղ ազատող  
Կարմիր թանակին:  
Հե՞յ, վեր կացեք,  
Գովարանենք  
Կարմիր թանակը,  
Հաստատ մնա,  
Լենինի բերած  
Մեծ հաղթանակը:

### 235. ԼԵՆԻՆՆ ԻՐ ԶՈՐՔՈՎ

Լենինն իր զորքով  
Իրա ծով խելքով,  
Խեղճ ու նաշարին,

Բեհալ անճարին,  
 Ժողվեց իրար քով:  
   Բանվոր—գեղացին  
   Տեր դարձավ հիմի,  
   Իր ունեցածին  
   Ու հալաւ հացին:  
 Ո՞վ էր տեսել  
 Էսպիս հրաշք՝  
 Որ մշակ, նոքար  
 Իրավունքով տիրեր  
 Աշխարք,  
 Էլներ զեկավար:  
   Լենին ասեց.  
   —Ե՛լ, դուք սոված,  
 Բանվոր—գեղացի,  
   Ջենքերդ առ,  
   Գնա առաջ,  
   Գործդ իմացին  
 Հին աշխարքին,  
 Զարբով տվեք,  
 Ցիր ու ցան անենք,  
 Ժողովրդի անցած կերքին  
 Նոր դարման անենք:

236. Լենինական  
 Լենինական, Լենինական,  
   Յարըս,  
 Կոմսոմոլիստ, կուսակցական  
   Յարըս:  
 Բատոլի վրի գինին,  
   Լենինական, Լենինական,  
   Յարըս,  
 Կեցցե զեկավար լենին,  
 Կոմսոմոլիստ, կուսակցական  
   Յարըս:  
 Ջերիս ոսկի դանակը,  
   Լենինական, Լենինական,  
   Յարըս,  
 Կեցցե Կարմիր Բանակը,  
 Կոմսոմոլիստ, կուսակցական  
   Յարըս:  
 Դուք խաղ կանչեք, ես թռնեմ,  
   Ամսոմոլիստ, կուսակցական  
   Յարըս,  
 Բալքի լորիկս բռնեմ,  
   Ամսոմոլիստ, կուսակցական  
   Յարըս:

237. ՍԱՐԻ ՍՈԼ Ա  
 Սարի սոլ ա, յարս,  
 Սարի սոլ ա, յարս,

Կոմսոմոլ ա,  
 Կոմսոմոլ ա, յարս:  
   Սրի էրթանք մեր բաղը,  
   Սարի սոլ ա,  
   Սարի սոլ ա, յարս,  
 Շախով կանչենք էն խաղը,  
   Սարի սոլ ա,  
   Կոմսոմոլ ա, յարս:  
 Հաղիկ ես շաղով արի,  
   Սարի սոլ ա,  
   Սարի սոլ ա, յարս,  
 Մեր կանալ բաղով արի,  
   Սարի սոլ ա, յարս,  
   Կոմսոմոլ ա, յարս:

### 238. ՍԱՄԱՂԱՐԻ ԳՈՐԾԿՈՄԸ

Սամաղարի գործկոմը,  
 Լավ բան ա անում,  
 Մաշինի ցորենը  
 Ջերգայով ա ցանում:  
   Մաշինն քշի վարի,  
   Շաղերով յար ջան,  
   Իրիկոնը շուտ արի  
   Խաղերով յար ջան:  
 Սամաղարի գործկոմը,  
 Լավ բան ա անում,  
 Մաշինի ցորենը,  
 Ջերգայով ա ցանում:  
   Գեղի հանդերը վարել եմ,  
   Շաղերով, յար ջան,  
   Պլանս կատարել եմ,  
   Խաղերով, յար ջան:

### 239. ՔԱՄԻ ՑԱՆԱ

Քամի յանա,  
 Քամի յանա, յարըս,  
 Կոլեկտիվը շատ լավ բան ա, յարըս,  
   Էս ինչ լավ ա բամբակը,  
   Քամի յանա,  
 Քամի յանա, յարըս,  
 Հով ա ուղենու տակը,  
 Կոլեկտիվը շատ լավ բան ա, յարըս,  
   Տրակտորով վարում ես,

Քամի յանա,  
Քամի յանա, յարըս,  
Պլանդ կատարում ես,  
Կողեկտիվը շատ լավ բան ա, յարըս

#### 240. ՎԱՐԴԻ ԵՄ ՔԱՂԵԼ

Վարդ եմ քաղել,  
Փոնջ եմ կապել,  
Հե՛յ ջա՞ն, հե՛յ ջա՞ն,  
Փոնջ եմ կապել,  
Քեզի համր նվեր ճամփել,  
Հե՛յ ջա՞ն, հե՛յ ջա՞ն,  
Նվեր ճամփել  
Շիր կանալի քըշալը  
Հե՛յ ջա՞ն, հե՛յ ջա՞ն,  
Քըշալը,  
Արի, տնից էրթանք կալը,  
Հե՛յ ջա՞ն, հե՛յ ջա՞ն  
Էրթանք կալը:  
Արկի հետ ենենք սարը,  
Հե՛յ ջա՞ն, հե՛յ ջա՞ն,  
Ենենք սարը,  
Ինչ սիրում ա  
Մեր աշխարհը,  
Հե՛յ ջա՞ն, հե՛յ ջան,  
Մեր աշխարհը:  
Ինչ ես էդքան մնում տանը,  
Հե՛յ ջա՞ն, հե՛յ ջա՞ն,  
Մնում տանը,  
Իմ արկն ես ու իմ ջանը,  
Հե՛յ ջա՞ն, հե՛յ ջա՞ն,  
Ու իմ ջանը:

1. Առվի ջուրը հոտել ա,  
Եղնիքը նստուել ա,  
Մերդ խորթ ա, այ տղա,  
Շորերդ կեղտոտել ա:

2. Սարի գլխի դուզ էլա,  
Եթիմ տղի թուզ էլա,  
Ցարիս մայրիկը խորթ ա,  
Խորթի աշքին փուզ էլա:

3. Ջաղացի դուռը ցախ ա,  
Կտուրը լիքը դախ ա:

241. ՆԻՆԸՄ, ՆԻՆԸՄ  
Նինըմ, նինըմ, առնում ա,  
Հո՛յ աման,  
Ջագսի դոնից դառնում ա,  
Զէ յաման:  
Կոմսոմոլի առնում ա,  
Հո՛յ աման,  
Մերը խորթ ա, խառնում ա,  
Զէ յաման:  
Քանի կանչնմ դայդեն ա,  
Հո՛յ աման,  
Կոլոր տղի սավդեն ա,  
Զէ յաման:  
Ցարիս խոսքը պահել եմ,  
Հո՛յ աման,  
Փոխանցիկը շահել եմ,  
Զէ յաման:  
Ցարիս խոսքով արեցի,  
Հո՛յ աման,  
Պլանս կատարեցի  
Զէ յաման:  
Պաղ ախտուր ա, զուզալ ա,  
Հո՛յ աման,  
Ջագս էրթալս հալալ ա,  
Հո՛յ յաման:  
Նինըմ, նինըմ նազան ա,  
Հո՛յ աման,  
Ցարս կուսակցական ա,  
Զէ յաման:  
Նինըմ, նինըմ յան գալու,  
Հո՛յ աման,  
Էրթանք սարը ման գալու,  
Զէ յաման:

#### Խ Ա Յ Ի Կ Ն Ե Բ

Ախտորս գալուն մատաղ,  
Գուտկումը լիքը վարդ ա:

4. Ցարիս երդիկը ծուխ ա,  
Խուճուճ մազերը թուխ ա,  
Աշքեր ոմի՞ ջուխտ ճրագ,  
Սրիտ ա էրում անկրակ:

5. Բարձն ու խալին փուած ա,  
Ցարս վրեն քնած ա,  
Ալքին, ոմքին հավան եմ,  
Համա ունգը թուած ա:

6. ԱՌ Հովհն տղա, Հովհն տղա,  
Ախարի զիմին քուն տղա,  
Մաղիկս ջուրն եմ գցել,  
Գնա բռնի, դռն տղա:

7. Զորի կածանը լեն ա,  
իմ սիրած տղին էն ա,  
Ինքը հաղար հնարփով,  
Տոն ու տեղով՝ շնորփով:

8. Քանի զինին թասին ա,  
Կանչենք խաղը «Հասին ա»...  
—Տղիրք շան, լավ քմի կանեք,  
Հարսանիքս պասին ա:

9. Այ ասին, «Հասին» ա,  
Կարմիր զինին թասին ա,  
Կարմիր զինին թափեցինք,  
Թաղա փեսին խափեցինք:

10. Աղրի չուրը սառն ա,  
Սար գնացողն իմ յարն ա,  
Յարիս յանարին ղուրբան,  
Մեշքի քամարին ղուրբան:

11. Կաթից համովը սերն ա,  
Կաթ կթողը իմ մերն ա,  
Էն զառնարած շեկ տղեն,  
Աշխարք գիտի՞ իմ սերն ա:

12. Հարսանիք, հարսնիք համաշա,  
Էլա կտուր թամաշա,  
Կարմիր սոլիր էս հագել,  
Համա դելիք հնմաշա ա:

13. Սարիրի հովն առուշ ա,  
Իմ յարը թութի զուշ ա,  
Հրես էկավ բեռներով,  
Բերածը զանդ ու նուշ ա:

14. Սոի քամակը շուշա,  
Իմ յարը թարան ղուշ ա,  
Բարձը թախտին դրած ա,  
Յարս վրեն կռնած ա:

15. Աղջի, անոմդ ի՞նչ ա,  
Միոնմ ես՝ ենթեր քիլ ա,

Հետս խոսա մի բերան,  
Իմանամ միտքդ ի՞նչ ա:

16. Մեր բաղի ճամփեն էս ա,  
Յարիս ճամփումը տեսա,  
Ասի՞ քեզնից կարոտով՝  
Իմ օրն ու հալը կես ա:

17. Աշխարքի կարգը էս ա,  
Դու հարս պտես, ես՝ փեսա,  
Օխտը պորտը հարցրին,  
Ասի՞ ձերը չհաս ա:

18. Կարմիր գինին ջամով ա,  
Միրած յարը համով ա,  
Ջահել տղա, ազիզ օր,  
Քեֆս սազով, դամով ա:

19. Շվին կածի՞ ձեն կտա,  
Ջենը գեղով մին կտա,  
Ախարոս գալուն մատալ,  
Թառլան ձին տակին կգա:

20. Սարի գոշը արոտ ա,  
Ցարս նախշոմ, խորոտ ա  
Խորոտովիլումն իր տեղին,  
Բոլիցը շատ կորտ ա:

21. Աղջի, սիրտդ բաց արա,  
Դուս գալուց իմաց արա,  
Նանիս տված մազերով,  
Զոր բողազդ թաց արա:

22. Փողին առա տարա կալը,  
Հագել ես խաս ու ալը  
Քեզնից բեղամաղ էլած,  
Աշքով տեսա՞ր իմ հալը:

23. Ամա՞ն տարան, իմ յարը,  
Տարան իմ մեկումարը,  
Աստված սիրեք մոտ եկեք,  
Էս ո՞նց կընի իմ ճարը:

24. Ասեմ՝ ով ա իմ յարը,  
Խոսեմ՝ ով ա իմ յարը,

Գիր-կալամով, հունարով,  
Ոսումով ա իմ յարը:

Իմ ազիզ յարի ձեռին,  
Դավթար ու դալամ պտի:

25. Սիրուն աղջկա տերը,  
Չովեց քափոր հերը,  
Թե աղջկա սրտովն ա,  
Ինչ ունեն հերն ու մերը:

34. Բահն առա՝ առուն գացի,  
Հացի զախին նստա հացի,  
Կշես անցար, բարով չես տա,  
Քո բարկիդ կարու մացի:

26. Թոն ա գալի վերիցը,  
Ես վառվա քու սերիցը,  
Քեզնով ես հայի-մայիլ,  
Ընկա դեզի վրիցը:

35. Վերի հանգում բանեցի,  
Հանդս ցորեն ցանեցի,  
Ազիզ յարը միտս ընկավ,  
Սանդր հոգոց հանեցի:

27. Արազի խոր աղիցը,  
Կողպա տոլագ գյաղիցը,  
Թողիլ են լավ խաղերը,  
Բռնիլ են հին զայդիցը:

36. Թուղթ ու դալամ ճարիցի,  
Ցարիս մի զիր գրիցի,  
Էս իմ զրած թղթումը  
Սիրոս միշին զրիցի:

28. Զեռնիրդ ծափ ես տալի,  
Շորերդ թափ ես տալի,  
Շեկ մազերդ շաղ էկած,  
Մովի պես լափ ես տալի:

37. Աղջի, հեյրան ես գառել  
Սարի շեյրան ես գառել,  
Որ ինձ առնես՝ իմացի,  
Գարդիս զարման ես գառել:

29. Մի յար ունեմ նազանի,  
Մարդու խելքը կտանի,  
Սև ու կամար ունքերը,  
Մեր ու գուման կհանի:

38. Շուշալս ժուն եմ տվել,  
Լկացքս գուն եմ փուել,  
Իմ ազիզ ախպոր խաթրին,  
Որձ գառը փուն եմ տվել:

30. Սիրուն աղջիկ մի թոնի,  
Խնձոր զցնմ դու բռնի,  
Ինձ չհալինես՝ կանիծնմ,  
Քամին թևերդ առնի:

39. Սարին կրակ եմ արել,  
Զադրին ճրագ եմ արել,  
Ցարիս փայ ու բաժնը,  
Մեր ու կարագ եմ արել:

31. Սար կա՝ սարի նման չի,  
Ցար կա՝ յարի նման չի,  
Ճուր տեղ ճամփա մի պահի,  
Քու մերն ինձի հավան չի:

40. Ոլխարը սար եմ արել,  
Գութանով վար եմ արել,  
Սարի հոտաղ էն տղին,  
Մտքումս յար եմ արել:

32. Սարերի տուղտը պտի,  
Զորերի թուխազը պտի,  
Իմ յարի ծնկան ծերի,  
Դալամն ու թուխտը պտի:

41. Սուրբ Սարգիսն ուխտ եմ արել,  
Մազերս ջուխտ եմ արել,  
Որ ինձ իմ սիրածին տան՝  
Գրբացին թուխտ եմ արել:

33. Սարերի սալմա պտի,  
Բաղերի քալամ պտի,

42. Աղբրիցը ջուր եմ տարել,  
Բաղիցը նուռ եմ տարել,

Տեսա՞ յարս ընդի շէր՝  
Ասացի՞ զուր հմ տարել:

Թէ որ ինձի կհավնես՝  
Քեզի չան, զուրբան ասեմ:

43. Գդակդ ծուռն ես դրել,  
Աչք մեր դուռն ես դրել,  
Լոթի-փոթի շախով ես,  
Ախտո՞ սխտոր ծախող ես:

52. Էս ա՝ գալիս ա տարին,  
Որ չեմ տեսել իմ յարին,  
Ընշանք տարին բոլորի,  
Իմ սիրտն էլ կմոլորի:

44. Դնա, զնալուդ մատաղ:  
Քու բարե տալուդ մատաղ,  
Ուսովդ մտիկ շտաս,  
Լիք բոխով գալուտ մատաղ:

53. Սարում ունեմ պոմուր տուն,  
Միջին ունեմ էրկու սուն,  
Սուն ու գերան վար պտեր,  
Սրտով սիրած յար պտեր:

45. Սարի խոտը ծեղվեծեղ,  
Ախտեր, էրթանք միատեղ  
Թէ հարամին վրա տա՝  
Գլուխս տամ գլխիդ տեղ:

54. Պուճուր աղջիկ, զալում ես,  
Մազերդ սպալում ես,  
Խոնջիկ-մոնջիկ անելով,  
Սրտիս եղը հալում ես:

46. Սոցումդ գիր ու զալամ,  
Խաղովդ Աշուղ-Քարամ,  
Ուխտ եմ արել, որ առնեմ,  
Գիտենա՝ աշխարք-ալամ:

55. Ուր գնաս, որտեղ մտնես,  
Թէ քաղաք, թէ գեղ մտնես,  
Ալամ-աշխարք պտիտ գսա,  
Իմ նմանը շգտնես:

47. Սամս սանդրիմ, նոր խաղամ,  
Էրկանք զնեմ ու աղամ,  
Հենց որ յարս անց կենա,  
Աղումս կիսատ թողամ:

56. Վիճակ, վիճակ օլորես,  
Աչքի վիճակ հլորես,  
Վիճակն ո՞ւմն ա, հարցրեք,  
Մուրազ—վիճակ օլորես:

48. Կտոր-կտոր վարել եմ,  
Սիրուն աղջիկ ճարել եմ,  
Տեսա անուշ քնած ա,  
Վարդն էրեսին փոած ա:

57. Էրևանուց կասի յարս,  
Անոնը Աղասի յարս  
Շաքի, Շիվան ու Շամախի  
Հնդաստանուց—կասի յարս:

49. Սանդ կծեծեմ՝ հախ կանեմ,  
Մաշիկը ոտիս լալի կանեմ  
Շատ որ խոսես, շան տղա,  
Մուկն ըռկիցդ կախ կանեմ:

58. Հրես վարդը գրկումս,  
Աղիդ յարս մտքումս,  
Զինի՛, յարս խոռվակ՝  
Վարդն էլ գոտկիս թոռումալ:

50. Անուշ խաղիդ ա՛խ կանեմ,  
Սերս վրեդ հախ կանեմ,  
Թէ որ ինձ շմոռանաս,  
Ուխտս ա՝ մատաղ կանեմ:

59. Սարվորը սարով էկավ,  
Իմ յարը բարով էկավ,  
Խովզինը ուսով գցած,  
Բողջով, նորբարով էկավ:

51. Աղջի կալնի, բան ասեմ,  
Մամերդ երկան ասեմ,

60. Արար, վարար, շատրարար,  
Քանց թաքվա ջուրը վարար,

- Բաքու գնացող տղա,  
Ուշ ու միտքս ո՞ւր տարար:
61. Ինչ որ արիր գու արիր,  
Գու ինձի դարդու արիր,  
Ինձ թողած՝ ուրիշն ատար,  
Էդ բանն իմ ջզու արիր:
62. Թարակ առու՝ զուլաւ ջուր,  
Էրկու գեղ ա՝ մի աղբյուր,  
Անունս հեշ տալիս չես,  
Սիրել իս՝ ջուղարը տուր:
63. Հերիք էնես մեր կտուր,  
Ընձի արիր սրտկուր,  
Թե չես հավնի՝ չէ ըսա,  
Թե կհավնիս՝ խոսք մի տուր:
64. Քամին էկավ հով մնաց,  
Անձրևն էկավ՝ ծով մնաց,  
Ցարս թթու խոսք ասեց,  
Իմ սիրտը խոսվ մնաց:
65. Ես ու յարս ջահել ենք,  
Ուխտ ու պայման արել ենք,  
Սիրել ենք սեր ու սավդով,  
Ալամ-աշխարքի դայդով:
- ԱՌԱԾՆԵՐ ԵՎ. ԱՍՏՎԱԾՎԱԾԲՆԵՐ
- Ագահի աքը մենակ հողը կկշտացնի:  
Ագուլի ինամին կաշաղակը կընի:  
Ագուլը վրեն քուչուց անի՝ մի դանդուկ միս չի  
գտնի:
- Ագուլի զուալով վարդիվորին ձին կդնի:  
Ագուլի ճուտն էլ իր մոր համար քաղցր ա:  
Ագուլի ճուտը չի թողա, մոր սերանց քան հասնի:  
Ագուլի տեսած սերմը չի կանաչի:  
Ագուլին ասին՝ ոշերի միջին որն ա սիրուն, ասեց՝  
իմ ճուտը:
- Ագուլին թագ տվին, որ ամենասիրուն ոշի գլխին  
դնի, տարավ իր ճուտի գլխին դրեց:  
Ազապ տղի աշքին փարզա կա:  
Ազապն ու քուր մին ա:  
Ազատվեցինք, հանդամ թե աղջիկ էր:
- Ազիզ թիքին մեյդան կհանի:  
Ախ կանես՝ ջահելովթյունը ձեռդ չի ընկնի:  
Ախմախին ձի փեշքաշ արին, ասեց՝ թամքել տվեք:  
Ախմախ գլխի ձեռփեց խեղճ ոտերը դաթար շու-  
նեն:
- Ախսպերը որ ախսպոն ուզեր, աստծուն էլ ախսպեր  
կըներ:
- Ախքատոթյունը աշխատավորի դռնիցը մտիկ ա  
արել, սիրու չի արել մտնի:
- Ախքատի ձեռին մի կտոր հաց հն տեսել:
- Ախքատի կով ըներ, հմի ցամաքել էր:
- Ախքատին մի ուլ, չն էլ անկանց խուլ:
- Ախքատին էրեխա շատ կլնի, հարուստին՝ մալ ու  
գոլվաթ:
- Ածան հավը կշշան կընի:  
Ակաս-մակաս, էդ էր պակաս:  
Ակատիկ՝ չվանի վիզ, կախվի երթիս:  
Աչը վեր ա, քանց մահը:  
Աչի տարին ինչ էր, որ մահի տարին ինչ ըլներ:  
Ազեղը որ շատ լարես, պտի կտրես:  
Ազեն ասում ա՝ քշի ձորը, քշի ձորը:  
Ազեքի մալն ա էթում, նոքարների շանն ա էթում:  
Ազն ա կերել մատաղը:  
Ազշիկը բիւակին կտան, ոչ թե բիւազպկին:  
Ազշիկը, որ կա՝ անի թիքա է:  
Ազշիկը, որ կա՝ էլ առի ա, դուշման քոռի ա:  
Ազշիկը մհծանա՝ բախտն էլ հետը կմհծանա:  
Ազշիկ-աղջիկ, քարի շղիկ, ալուր մաղեն զամ քեզ  
պահեմ:
- Ազշկանը ժառանգ են ասել, որ մոր սիրտը շճաքի:  
Ազշիկ եմ, ողամ եմ՝ նաշազ եմ:  
Ազշիկ ուզեմ՝ մերը տես, կտոր ուզեմ՝ ծերը տես:  
Ազշիկը գնացական ա, տղեն մնացական ա:  
Ազշիկը գարի ա, տղեն՝ ցորեն:  
Ազշիկը որ կա՝ էլի կարմունց ա:  
Ազշիկը որ կա՝ էլօղու ճրաք ա:  
Ազշիկը որ կա անկրիլ ձմերուկ ա:  
Ազշիկը ուզի օրորոցով իր հոր տանը շմնա:  
Ազշիկը հոր տանը շուր ա, տղեն ավազ ա:  
Ազշիկը օրեկան, բաժինքը՝ տարեկան:  
Ազշիկը մատին կտան, ոչ թե մատանիքին:  
Ազշիկն ասեց՝ լվացքի պես բախտս ըլներ:

Աղջկա գնացած տեղն ինչքան լավ ըլնի, աշքը հոր  
տանը կըլնի:

Աղջկա զնացած տեղը լավ ըլնի, կասի՝ իմ բախտն  
ա, վաս ըլնի սաբարին կանիծի:

Աղջկը մոր համար շապկի թիկունք չի:

Աղջկա առաջի փեղը քամակինն դուզման ա:

Աղջկա անոնը որ կա՝ շոշա ա:

Աղջկա բախտին չեն նստի:

Աղջկանը վաթան շոնի:

Աղջկանը փափախով տփիր՝ վեր ըլնկավ, հասել ա:  
Աղջկն էլ բռնես, պտի սոյն իմանաս:

Աղջկեսը հավաքնուն իրան իշխան ա իմանում:

Աղջկեսը պոչն ա վկա բռնում:

Աղջկեսի բռնումը պանիր չի կննա:

Աղջկեսի դոնը հավողին հնասավ, ասեց՝ թիռու ա:  
Աղջկեսի խելքը հավի թափիցը դինը չի անց կենա:

Աղջկեսիցը շշադ ուղեցին, պոչը շանց տվեց:

Աղոնն իմնէ, անոնը քննը:

Աղ ու հաց՝ սիրար բաց

Աղոնչացը չի կարչի:

Ամագս նրուսաղեմ էրավ:

Ամագս որ ուրանան, ջուխտ աշքով կկուրանան:

Ամանը առավոտը մի պուտ շրով, իրիկոնը՝ մի  
գետ շրով:

Ամանը շատ լցվեց, պտի թափի:

Ամանաթ ձիուցը թեզ վեր կպան:

Ամանաթը զյամաթ չեն անի:

Ամանաթը տերն ուղում ա:

Ամառ-ձմեռ խանին մի խելքն ի՞նչ կանի:

Ամառը ամեն պատի տակ մի տուն ա:

Ամառը մարդ խանի թափի ըլնի, ձմեռ՝ իշխանի  
կատու:

Ամառվա արեին ի՞նչ տաքացանք, որ ձմեռվա  
արեն ի՞նչ տաքանանք:

Ամառվա ձննդկանի ձմեռվանին էրաննկ ա տվել:

Ամառվա փուշը ձմեռվա նույն ա:

Ամեն ասածի, որ լսենք, հացը ցամաք կուտենք:

Ամեն ասած հալած եղի տեղ չեն դնի:

Ամեն բալա իր մոր աղիկն ա:

Ամեն բանի սվերն ա դժվար:

Ամեն բանի փերջին մտիկ արա:

Ամեն բանի առուժափի կա, նամուսին՝ չկա:

Ամեն էրաննեկ մի տեղ չի ըլնի:

Ամեն ծափ տվողի առաջ մի շորորա:

Ամեն ծաղիկ մի հոտ ունի:

Ամեն խորաթա շլանի չի գա:

Ամեն կնիկ կնիկ ըլնի, պատերը փեր պլեկ կըլնի:

Ամեն պալացող ոսկի չի ըլնի:

Ամեն վախտի կուժը լիքը չի ըլնի:

Ամեն վարարելու գետը կոճիկ չի բերի:

Ամեն շավին մի դարման կա, ամեն փորձանքի  
մի խրատ:

Ամեն փլածով մի խաղա:

Ամեն երեխա մի տան ճրագ ա:

Ամեն ալա չի կանար չեն հանի:

Ամեն մարդ մի հունար ունի:

Ամեն գիշերը վրեն լուս կրացվի:

Ամեն իսուսքը մի լիդր մեղով չի ուտվի:

Ամեն խաղացողի հետ մի տնգտնգա:

Ամեն օր գետը չի վարարի:

Ամեն օր էծի քամակն ա բաց, մի օր էլ թող ոչխա-  
րինն ըլնի:

Ամեն օր գետը գերան չի բերի, արտն էլ օրան չի  
բերի:

Ամեն օր տատը գաթա չի ուտի:

Ամեն հաղ հավացինք, մնաց սարի սնգին:

Ամեն տարի խանին մերը տղա չի բերի:

Ամեն գորա իրա ճմճմնն կդպվա:

Ամեն շուն իր դռանը կհաշի:

Ամպ օր՝ անբան կնկա օր:

Ամպ օրը գիլի համար հարսանիք ա:

Այբն ասեցիր, զի բննն էլ ասա:

Այիբն էրեսով չեն տա:

Անամոթը տասներկու շապիկ ունի, մեկը հանի  
մեկը կհազնի:

Անալոր խափկ էր, խանճրահամն էլ վահ տվեց:

Անալոն շաղացի քարը պտիտ չի գա:

Անաստված տեղը գնա, անարիխա տեղը մի գնա:

Անբախտին շոմն ու կատոն կսիրեն:

Անելու դարդիցը, ուտելու հարաթ ա:

Անթեղած կրակը մոխրի տակին, էլն էն կրակն ա:

Անխելքի հացը խելքովի փորը:

Անհամ, անհոտ, անջուր կորկոտ:

Անձրեկ մինչև շվարարի, չի կարի:

Անձրեկ օրը հավերին ջուր տվող շատ կըլնի:

Անձրեկ անցանք, կարկտի տակ ընկանք:

Անզալ գլուխդ մի զնի զալմազալի տակ:

Անզալաթ-մին աստված ա:

Անձարն ա կերել բանշարը:

Անմազին մազ կփա, մազավորին՝ կըվեզա:

Անոթություն՝ անամոթություն:

Անոթի կատվի ճանկից մուկ կպրծնի:

Անոդը պրծել ա, խարար տվողը չի պրծել:

Անեախ ա ձուկը թարփն ընկել:

Անշախ հացը կոտմին ենք հասցնում:

Անշախ ձեթը ճրագին հասավ:

Անշախ կարպետը ջրիցը հանում ենք:

Անշախ շուրը շրամանիցը շոկում ենք:

Անշուր շաղացը խարար կանի ալրի հացը:

Անշուր տեղը մի բորկանա:

Անջուր շաղացը ալուր չի աղաւ:  
 Անտեղի ու վեր ունենք, ու վեր զնենք:  
 Անցած օրին օր չի հասնի:  
 Անցավ գուլսկ մի դի ավետարանի տակ:  
 Աշդի հալը որ հասնի, նեյնիմ-նեյնիմ կընկնի:  
 Աշխար-աշխարով կանցնի, թե մոզին գոմշին հաս-  
 նի:  
 Աշխարը լիքը գել ա, դու գառան երշով ևս ման  
 զալի:  
 Աշխարը ծով, մենք միշին՝ սով:  
 Աշխարը դմակ ա, իսանը դանակ ա:  
 Աշխարը կրակ ընկնի, վառի, միշին մի խորով  
 խոս չունեմ:  
 Աշխարը փիլաքան ա, մինը կելնի, մինը կիշնի:  
 Աշխարը աշխատողինն ա:  
 Աշխարը ինկրոպւթյունն ա կերել:  
 Աշխարքումը ջուր չներ, ծարավ էլ չէր ըլնի:  
 Աշխարը շոփով չի ծածկված:  
 Աշխարը թալան, էրթա խաբար չի ունենա:  
 Աշխարը, որ կա՛ գետ ա, իսանը միշին ջուր ա:  
 Աշխարը չենք շալակի հետներս տանի:  
 Աշխարումը մի լավություն կա, մի վատություն:  
 Աշխարքը որ կա՛ մեղրի կարաս ա, ով մեկին դեսը  
     կըոթե, մեկելին դենը՝ նա կուտի:  
 Աշխար ավիրվի, էն մեշկի վրա չի ընկնի:  
 Աշխարքումը որ մենոնիլը կա, վատությունը ի՞նչ  
     բան ա:  
 Աշխարքի մալը, աշխարքին կմնա:  
 Աշխարքի վերը էն վախտը կընի, որ էլ լավ մարդ  
     լընի:  
 Աշխարքում զատ կլնի, որ տեր չմինի:  
 Աշքի եղը թայ ու թուզ չունի:  
 Աշքդ թերթեցիր, բանիդ տեր չես:  
 Աշքն իր տեսածիցն ա վախում:  
 Աշքը շինելու տեղը, ունքն էլ փուլ ածեց:  
 Աշքն ինչքան բանցրանա, ունքիցը վիրու չի բանցը-  
     րանա:  
 Աշքն ինչքան բոռանա, էլ եղ տեղը կմնա:  
 Աշքն իր տիրոջն ասել ա՝ ևս աշխարքին մտիկ եմ  
     անում, քեզ չեմ ասում, համա դու իմ խաղալն  
     աշխարքին ասում ես:  
 Աշքն էլավ, խիլն էլ հետն էլավ:  
 Աշքը բաց արա, նոր ոտդ քի:  
 Աշքից էլ ենք պրծել, աշքացավից էլ:  
 Աշքից հանում, ունքն ես զնում:  
 Աշքից հեռացած ա, մտքից մոռացած ա:  
 Աշքիդ հավատա, ականջիդ մի հավատա:  
 Աշքովդ տես, նոր հոգովդ վկայի:  
 Աշքովդ տես, որ ուրիշին մեղ ընես:  
 Աշքսի կովա, սիրտսի չի լաւ:

Աշքի սուրճա թոցնող ա:  
 Աշքում մազ ա բռսել, որ էդ բոլին իմ հասցրել:  
 Ապրոսող պակաս ա, տրծիկ տաղ վնաս ա:  
 Ապրիլ կա էրկաթ ա, ապրիլ կա՛ էրծաթ ա:  
 Ապանեկը ճպոնեկի ախտերն ա:  
 Առաջ մերը, հետո մերոնցը:  
 Առաջ հաց, հետո հարցի:  
 Առաջ ֆորթերն ա գալի, հետո՝ նախիրը:  
 Առաջ կերթամ՝ կղոթես, ետև կերթամ՝ կրոթես:  
 Առաջի խոսողն ինչ գիտի, թե եղի խոսողն ինչ կա-  
     սի:  
 Առաջ անունդ ոչխար հանի, նոր գել զառի:  
 Առաջի տանող, եղի խաբար հանող:  
 Առաջուղով բանը բարի, գերվանը դե խանգարի:  
 Առաջուղով բարի, լուս, կեսօրին դարիդուզ:  
 Առակն անխոտելի ա:  
 Առաջորդը ևս եմ բակլեն խաշած եմ ցանում:  
 Առնոդի աշքը ծախողի ձեռին կընի:  
 Առուտուր ա՛, թե առ ու կու ա:  
 Առուն լոր արա, նոր հոպ արա:  
 Առուտուրն իր տեղը, ուտիլ-խմիլն իր տեղը:  
 Առանց էշի գուխ, հարսանիք չի ըլնի:  
 Առանց շափի արտ չկա, առանց դարդի մարդ չկա:  
 Առանց ջուր ոտներն ա հանում:  
 Առանց փշի վարդ չի ըլնի, առանց դարդի մարդ  
     չի ըլնի:  
 Առեւ ա կուտօ, մտել ա մոլթը:  
 Առնելում մարդ ա, տալուն նամարդ ա:  
 Առնելում էլ եմ փոշման, ծախելուն էլ:  
 Առուն թոել ա էն դի՛ք կայնել ա:  
 Ասս՝ ով ա հնկերդ, ասեմ՝ ով ևս զու  
 Ասեղ գցես՝ գետին չի ընկնի:  
 Ասեղը քեզ իրի, նոր մախաթը՝ խալիխին:  
 Ասեցին դավա են ման ածում, համա որդի՛ ա  
     արածում:  
 Ասողին էլ լուռ պտի:  
 Աստված ագուավի ողելը որ լսի, վարդիվորին ձուն  
     կրնի:  
 Աստված ազատի լախստրակի եղի շովթիցը:  
 Աստված ամեն զարդին մին զարման ա տվել:  
 Աստված ամեն մարդի սրտով իրան տալիս ա:  
 Աստված է ձեռը, էն ձեռին մովստաց շանի:  
 Աստված էլ բժիթարիցն ազատի:  
 Աստված էլ զգիտի ինչ ա անում:  
 Աստված հարուստին եռ տա, եղունգ շտա:  
 Աստված մեղրամու ուզողին մեղրն էլ հետը կը-  
     տա:  
 Աստված մի դուռը փակում ա, մինը բաց ա անում:  
 Աստված սարը տեսում ա, նոր ձունը դնում ա:

Աստված տալիս էլ ա փորձում ա, առնում էլ ա  
 փորձում ա:  
 Աստված էրեխեն տա, զամաթն էլ հետը կտա:  
 Աստված սլթա իսանի խելքն ա առնում, նոր մալ  
 ու դրվաթու:  
 Աստված օր տա, բարին էլ հետը կտա:  
 Աստված փլավն ումն ա տալի, իշտածն ումն ա  
 տալի:  
 Աստված տա լաբուն, որ տա իր ձագուն:  
 Աստծու պահած գառը գելը չի ուտի:  
 Աստծու տված, աստծու տարած:  
 Աստծուց որ չկա, սուրբն ի՞նչ մեղավոր ա:  
 Աստվածածինն արա՝ բակը մտի, մուղնուխտն  
 արա՝ զուրը հետ արա:  
 Աստվածածինց եղը շախամը ջրի էրեսը կընի:  
 Աստանց ցալում ա զուս գցի, հարևանդ վատ ա՝  
 հեռացի:  
 Աստամ-ատամի տանք, վերջը սար կը շուտանք:  
 Աստամ քչփորելով, յոլա էթալ չի կընի:  
 Արա մեղ համար, սովորի քեզ համար:  
 Արաբն չի ճոռա, արաբալն ինոռա:  
 Արկը փիս տեղ ա մեր մտել:  
 Արկպացին ինչ տաքացանք, որ արևմտոցին ինչ  
 տաքանանք:  
 Արևն էտավ, լուսակը հել էլավ:  
 Արևն էտավ, աստղերը խալարեցին:  
 Արևին ի՞նչ տաքացա, որ անձրկին ինչ հովանամ:  
 Արիլ ես ծեռներովդ, լաց էլի աշքերովդ:  
 Արդեկած բարը համավ կընի:  
 Արինը շոր չի դանա:  
 Արինն արնով չեն լվանա:  
 Արինն ու շորը մին ա դառել:  
 Արծիվը ինքան ցածանա, էլի քարի վրեն ա:  
 Արհեստավորի շերը մինակ առավոտը դարդակ  
 կընի:  
 Արշն իր աշու զոռում ա:  
 Արքը պարով ընկավ, տանձը մտիցն ընկավ:  
 Արշի ուզ ու միտքը թթու փածին ա:  
 Արշի ճուտերը մեծացան, արշի պոշի հետ իսաղա-  
 ցին:  
 Արշին կամ լժեցին, ասաց՝ էդ իմ բանը չի:  
 Արտը խախուտ, մհանեն կարկուտ:  
 Արտն մենք էն զիմիցն ենք հնձել:  
 Արտը Միտոյին, սերմը Ճրտոյին:  
 Արտը կահալուց ենք կերել:  
 Արտդ բուսնի, նոր մանգաղդ սրի:  
 Արդարությունը հիվանդ կընի, մեռած չի ընի:  
 Արի բարի քալի, մի արտի գարի:  
 Արի ու էշը տիկը հանի:  
 Արինը տամարիցը կառնեն:

Արի դու քարը փեշիցը թափի:  
 Ափսոս շաքար՝ շան բերան:  
 Ափիս միշին հոտ եմ քաշե:  
 Ափսոս քաղաք, որ թագավորդ մանուկ ա:  
 Ափսոս չե՞ս ոտներիդ ծունդը դնելու ա:  
 Բարը բարին որ զգտնի, աշխարն ախ ու վայ-ով  
 կանցնի:  
 Բարածանի շաղացն էս ա, ալուրն ու թիփը կես ա:  
 Բազկե թթու թան, հա՛ ոտեն, հա՛ զկրտան:  
 Բաղրգանի փողը որ պակսի, նիսլի քամակ կըն-  
 կընի:  
 Եթալին ցանես, բակլա կընի:  
 Բախկալը քարիցն ա քամում, սատանին տանիցը:  
 Բախտը ձիավոր ա՝ մենք ոտավոր:  
 Բախտը փայ անելու վախտը մենք ընդի չէինք:  
 Բախտիցդ գանգատվի, ումից ե՞ս գանգատվում:  
 Բահիդ դեմը ես բժիր էլ ունեմ:  
 Բաղի խերն ա, բարին բեշարումն ա:  
 Բաղ անկեցինք, բարը շկերանք:  
 Բաղը բաղվանչուցը խով ա կացել:  
 Բաղիցս էկել ես, տանիցս հանո՞ւմ ես:  
 Բաղիցը ես եմ գալի, բաղվանչուցը սալզը դու ես  
 տաքանանք:  
 Բաղումդ զնրնդն մի թողա, տոնդ՝ դուշման:  
 Բամբասանի սիալը կլնի, սուտը չի ընի:  
 Բանին յա պոշ կպցնի, յա պոզ:  
 Բանը բանից անցել ա:  
 Բանը բերներերան՝ հազար բերան:  
 Բանը բերներերան՝ ասեղը դառավ գիրան:  
 Բանը զիմիցը շանես, ծուրը կգա:  
 Բանի զրին փախավ, հացի զրին հասավ:  
 Բանն էն չի, ասեմ խրատ, բանն էն ա, առնես  
 վրագ:  
 Բանն ինչ կանես կեղտու ա, բամբակը կորպու ա:  
 Բանը հնացավ, տերը շնացավ:  
 Բանը հիա ախտ ու բախտ ա:  
 Բանի հուրին ծաղկի փերին:  
 Բանը որ աշխարքով ա, օրենք ու կարգ ա:  
